2024, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (653)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայտարարություն Գերագույն հոգևոր խորհրդի

Տավուշի մարզից տարածքները Ադրբեջանին միակողմանիորեն հանձնելու իրողության և բանակցություններում ՀՀ իշխանությունների որդեգրած անընդունելի դիրքորոշումների առնչությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը վերահաստատում է նախընթաց արտահայտված իր դիրքորոշումը:

Խիստ վտանգավոր ենք համարում առանց համապարփակ ու երաշխավորված լուծումների Տավուշի սահմանամերձ շրջանում սահմանազատման ու սահմանագծման անվան ներքո իրականացվող գործողությունները, որոնք նոր սպառնալիքներ են առաջացնում մեր ժողովրդի համար: Ստեղծված կացությունն արդարացի ընդվզում է առաջ բերել աշխարհասփյուռ հայության և, մասնավորապես, Տավուշի սահմանամերձ համայնքների բնակիչների շրջանում՝ պատճառ դառնալով «Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժման սկզբնավորման:

Առկա գոյաբանական մարտահրավերներին հանդիման հոգևոր սպասավորները, տվյալ դեպքում՝ Տավուշի թեմի եկեղեցականները՝ թեմական առաջնորդի գլխավորությամբ, հավատարիմ իրենց հոգևոր առաքելությանն ու կոչմանը, չեն կարող անտարբեր մնալ ու անհաղորդ՝ իրենց խնամքին հանձնված ժողովրդի անհանգստություններին ու կարիքներին:

Մեր ժողովրդի զավակներին հորդորում ենք արդար մտահոգություններն ու անհանգստություններն արտահայտել բացառաբար խաղաղ ճանապարհներով և դրսևորել հանդարտություն ու զսպվածություն՝ զերծ մնալով հակաօրինական գործողություններից: Հասարակական կարգի պահպանության համար պատասխանատու ծառայություններից ակնկալում ենք բացառապես օրենսդրությանը խիստ համապատասխան գործելաոճ:

Կոչ ենք անում նաև իշխանություններին՝ անսալ ժողովրդի հիմնավոր պահանջներին և խաղաղությանն ուղղված գործընթացներում առաջնորդվել այնպիսի մոտեցումներով, որոնք չեն մեծացնի անվտանգային սպառնալիքները՝ խորացնելով մեր հանրության մեջ անպաշտպանվածության և անորոշության զգացումները: Կարևորելով սահմանազատման ու սահմանագծման գործընթացները՝ միաժամանակ հաստատում ենք, որ այդ աշխատանքները պետք է իրականացվեն պատերազմի բացառման, Հայաստանից բռնազավթված տարածքների վերադարձման և բնակավայրերի անվտանգ ու անխաթար կյանքի ապահովման երաշխիքների առկայության պայմաններում:

Ազգային մեր արժանապատվությունը, հայրենի պետության և սրբազան արժեքների հանդեպ նախանձախնդրությունն ու հավատարմությունը պետք չէ տեղի տան անհուսության, անհանդուրժողության և երկչոտության, թշնամանքի և ատելության առջև:

Եկեղեցին, չունենալով քաղաքական իշխանության հավակնություններ, պիտի շարունակի պատմական պատասխանատվության գիտակցությամբ ջանքեր ներդնել հանուն հայրենիքի և պետականության զորացման, մեր ժողովրդի ինքնության ու իրավունքների պաշտպանության, ազգային կյանքում միասնականության ու եղբայրսիրության ամրապնդման՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը:

Մեր աղոթքն է, որ երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի մեր երկիրը և մեր ժողովրդի կյանքից ներս զորացնի սիրո, համերաշխության ու միաբանության ոգին: Ամեն:

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը, որի ընթացքում հիշատակվում է նաև 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Սուրբ Էջմիածին փոխադրման պատմական օրը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանությունը պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս Հովհաննիսյանը:

Սուրբ պատարագի ընթացքում Հայոց Հովվապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք, և հոգևոր դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Արարողության ավարտին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, ներկա հավատացյալ ժողովրդին ու համայն հայությանն ուղղեց իր պատգամը.

«Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց,

Հաղթական անցյալի ներշնչանքով և լուսավոր ապագայի հույսով, բայց նաև ծանր զգացումներով ենք այսօր դիմավորում Հաղթանակի և խաղաղության տոնը, տոնը Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձի: Այս տարի, խորհրդանշական զուգադիպությամբ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տոնախմբում է նաև մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի համբարձումը և Հայրապետական Աթոռի՝ Սուրբ Էջմիածնում վերահաստատվելու հիշատակի օրը: Ազգային, պետական ու եկեղեցական կարևորագույն այս տոների համընկնումով Մայիսի 9-ն ամբողջացնում է խորհուրդը հաղթանակի:

Այսօր մեր երկիրն ու ժողովուրդը դիմագրավում են գոյաբանական ծանրագույն փորձություններ: Անհուն զրկանքների ու զոհողությունների գնով ազատագրված Արցախը բռնազավթված է ու հայաթափված, մեր սրբավայրերն ու շիրիմները՝ լքված ու ավերակված: Վտանգված են Հայաստանի սահմանները, և սպառնալիքների տակ՝ հայրենաբնակ մեր ժողովրդի կյանքը, կորսված է մեր անդորրը, և խոցոտված՝ մեր ազգային արժանապատվությունը:

Ցավալի կորուստների և դառն պարտությունների մեջ մենք վերստին դառնում ենք դեպի կյանքի Աղբյուրը, դեպի ամենախնամ Աստված, որ հազարամյակների փորձությունների ու մաքառումների, արհավիրքների ու աղետների մեջ կյանքի ու հարատևության շնորհով օրհնեց մեզ և ոգեշնչեց՝ ասելով. «Քաջալերվեցեք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺՁ 33): Մենք ժառանգներն ենք մի ժողովրդի, որ մահվան ու տառապանքների դեմ գոտեմարտում երբեք չկորցրեց իր հավատն առ Աստված, պահեց հավատարմությունը իր հոգևոր-ազգային արժեքներին և չհրաժարվեց իր ինքնությունից: Մենք հետնորդներն ենք մեր հերոս նախնյաց, որոնց փառապանծ գործերով հզորացել ու պայծառացել են ազգն ու հայրենիքը, դպրությունը, գիտությունն ու մշակույթը: Հայրենի հողը շենացնելու, հայոց պետականությունը վերականգնելու նվիրական տեսիլքը վառ պահելու համար մեր հայրերը 1441 թվականին Սսից Սուրբ Էջմիածին փոխադրեցին Հայոց Հայրապետական Աթոռը:

Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածինը համայն հայության հոգևոր տունն է՝ հայոց անկախ պետականության կերտման դարբնոցը, մեր ժողովրդի հաղթանակների ու հարատևության խորհրդանիշը և ազգային մեր անաղարտ ինքնության ջահակիրն ու պահապանը: Սուրբ Էջմիածնի տեսիլքն այսօր ևս շարունակում է մնալ հոգևոր ներուժն ու ակունքը հաղթանակների: Հաղթանակ՝ փորձությունների դեմ, հաղթանակ՝ ինքնության ու արժանապատվության համար մղվող պայքարում, հաղթանակ՝ առ հայրենին ու առ սրբազան արժեքները հավատարմության: Մեր հաղթանակները չունեն թշնամանքի ու ատելության կնիք, այլոց արժանապատվությունը նսեմացնելու, սրբությունները ոտնահարելու և ինքնությունը ոչնչացնելու չարորակ նկրտում: ➥ էջ 2

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

⬅ *էջ 1*

Մեր հաղթանակներն ամրապնդում են կամքն ու վճռականությունը՝ հասնելու խաղաղության, անվտանգ պահելու մեր ժողովրդին, վերահաստատելու համազգային սերն ու համերաշխությունը:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Մեր սիրտը հուզում են նույն մտահոգություններն ու ցավերը, որոնք ալեկոծում են հոգիները հայրենիքի ծանր մարտահրավերներով անհանգստացած աշխարհասփյուռ Մեր զավակների: Այդ տագնապներով են նաև այս օրերին իրենց ընդվզումի ձայնը բարձրացնում «Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժման մասնակիցները: Մեր մաղթանքն է, որ շուտափույթ հանգուցալուծում գտնեն առկա հիմնախնդիրները, և մեր ժողովուրդը պատվով հաղթահարի մեզ պատուհասած արհավիրքները: Արդ, հույսով ու լավատեսությամբ զինվենք, չտկարանանք դժվարությունների առջև, հիշենք մեր նախնիների սխրանքները, թոթափենք վախի ու անտարբերության կործանարար զգացումները, լինենք միակուռ ու միաբան: Համախմբվենք հայոց անկախ պետականության լուսավոր գաղափարի շուրջ՝ Աստծո օրհնությամբ անկասելի դարձնելու մեր ժողովրդի ընթացքը դեպի նոր հորիզոնները մեր լուսավոր գալիքի:

Աղոթենք միասնաբար, որ Աստված խաղաղություն պարգևի համայն աշխարհին, նոր կորուստներից ու աղետներից հեռու պահի մեր հայրենիքն ու ազգը և Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո շնորհի անվտանգ կյանք ու ստեղծարար հաջողություններ այսօր և միշտ. ամեն»:

Հավարտ սուրբ պատարագի, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց հոգեհանգստյան կարգ: Եկեղեցականներն ու ներկա հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան հերոսամարտերում զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների խաղաղության ու հանգստության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններն այցելեցին «Հաղթանակ» զբոսայգի

Մայիսի 9-ին, Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններն ու ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության գնդերեցներն այցելեցին «Հաղթանակ» զբոսայգու հուշահամալիր: Անհայտ զինվորի հուշարձանին ծաղիկներ զետեղելուց հետո նրանք իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան հերոսամարտերում զոհվածների անմար հիշտատակին: Հոգևորականները, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանի հանդիսապետությամբ, աղոթք բարձրացրին առ Աստված՝ նրանց հոգիների հանգստության համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մայիսի 4-ին

ՀՅԴ-ի «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց ՀՅԴ-ի «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՅԴ-ի գերագույն մարմնի անդամ Գեղամ Մանուկյանի:

Հանդիպմանը պարոն Մանուկյանը Վեհափառ Հայրապետին տեղեկություններ փոխանցեց միության ստեղծման պատմության և ներկա գործունեության մասին:

Այնուհետև Նորին Սրբությունը, ողջունելով և իր օրհնությունը բերելով միության անդամ երիտասարդներին, իր գնահատանքը հայտնեց նրանց հայրենանվեր իրագործումների համար: Հայոց Հայրապետը նկատեց, որ յուրաքանչյուր հայորդու հայրենասիրությամբ ու քաջարի ոգով պետք է իմաստավորվի հանուն հայրենիքի նահատակված մեր զավակների զոհաբերությունը, որպեսզի հնարավոր լինի կերտել անվտանգ, բարօր և առաջընթաց հայրենիք:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ առ Աստված ամուր հավատքի, արիության և միասնականության շնորհիվ հայ ժողովուրդը կկարողանա հաղթահարել հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներն ու փորձությունները: Այս առնչությամբ Հայոց Հայրապետը հորդորեց երիտասարդներին լինել միաբան՝ կառչած ազգային արժեքներին, ակտիվորեն ներգրավվել հոգևոր-եկեղեցական կյանքին, ամուր պահել սերն ու նախանձախնդրությունը հայրենիքի նկատմամբ, առաջնորդվել նախնյաց լուսավոր օրինակով և չտկարանալ մեր երկի առջև ծառացած դժվարություններից:

Հանդիպման վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու հոգեխնամ և ազգապահպան առաքելությանը, հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղիներին:

Մայիսի 5-ին

Շվեդիայի եկեղեցու Վեստերիսի եպիսկոպոսին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեդիայի Եկեղեցու Վեստերիսի եպիսկոպոս Միքայել Մոգրենին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, անդրադարձ կատարելով հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, իր գնահատանքը հայտնեց Շվեդիայի Եկեղեցուն և իշխանություններին՝ Հայաստանին և Արցախից բռնի տեղահանված հայորդիներին ցուցաբերած զորակցության համար:



Իր հերթին Միքայել եպիսկոպոսն ընդգծեց, որ Հայաստան է ժամանել ծանոթանալու հայրենազրկված արցախահայերի սոցիալական կացությանը և իր նպաստը բերելու առկա խնդիրների հաղթահարմանը:

Մայիսի 12-ին

Կաթոլիկ եկեղեցու Ինսբրուքի թեմի առաջնորդին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթոլիկ Եկեղեցու Ինսբրուքի թեմի (Ավստրիա) առաջնորդ Հերման եպս. Գլեթթերի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին «Կարիտաս Ավստրիա» և «Հայկական Կարիտաս» կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը, անդրադառնալով բռնի տեղահանված արցախահայության առջև ծառացած մարտահրավերներին, Հայաստանի անվտանգային սպառնալիքներին և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներին, իր գնահատանքը հայտնեց կազմակերպությանը՝ Հայաստանին և հայ ժողովրդին ցուցաբերվող աջակցության համար:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու եղբայրական հարաբերություններին և փոխգործակցությանը:

Իր հերթին Հերման եպս. Գլեթթերը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ Հայաստան այցի նպատակն է առավել զորացնել «Կարիտաս Ավստրիա» և «Հայկական Կարիտաս» կազմակերպությունների համագործակցությունը և իրենց զորակցությունն ու համերաշխությունը բերել հայ ժողովրդին:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

«Մեր իղձերն ու երազանքները պետք է ավելի մեծ լինեն, քան մեր կյանքը»

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը շարունակվում է

«Ոչ մի Վեհափառ, նույնիսկ Ավարայրի ժամանակ Հովսեփ կաթողիկոսը, կանգնած չի եղել այսպիսի դժվար երկընտրանքի առաջ, երբ իր երկրի ներսից անհամեմատ արմատական և ատելությամբ տոգորված հալածանք կա ազգային հավատքի, մտածողության, բարոյականության ու նկարագրի նկատմամբ, ինչպես այսօր է: Այդ Վեհափառի ազդեցությամբ, նրա ղեկավարության օրոք են հասակ առել այսօրվա սրբազանները, որոնք, ըստ էության, սխրագործություն են կատարում...

Եկեղեցին մեզ տանում է մեծ դարձի ճանապարհով, դրա համար այսօր տեղի է ունենում արթնացում»:

Սերժ Սրապիոնյան

Հայոց պատմության մեջ բազմաթիվ են հոգևորական անհատականությունները, որոնք ժողովրդի գոյաբանության վճռորոշ պահերին ճակատագրական դեր են խաղացել՝ ազգային ընթացքի բեկում կամ վերելք նշանավորելով: Մեր օրերում, երբ պաշտոնապես շահարկվում է Հայ Եկեղեցու ազգապահպան դիրքորոշումը՝ քաղաքական անհեթեթ մեղադրանքների աստառ հագցնելով դրան, պատմությունը ևս գալիս է հակափաստարկելու քննության չդիմացող նման հայտարարությունների՝ հիշեցնելով, որ երբ վերջնականորեն տանուլ են տալիս քաղաքական գործիչները, ստիպված ասպարեզ են իջնում հոգևորականները: Պատմականորեն անվիճարկելի է այն իրողությունը, որ Հայ Եկեղեցին չի կարող չեզոքություն, առավել ևս զգուշավորություն ցուցաբերել լինել-չլինելության դատապարտվածության դեմ հանդիման հայտնված հայրենիքի հանդեպ: «Ով աչք ունի և ջերմ սիրտ իր ժողովրդի հանդեպ,– ասում էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Չորեքչյանը,– տեսնում է նորա անտանելի տառապանքը, մի՞թե կարող է հոգով չվշտանալ և չօգնել նրան, եթե մինչև իսկ զոհողություն պահանջէ այն...»:

Մայիսի 4-ին Բագրատ սրբազանի առաջնորդած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցները Հայաստանի սահմանից մայրաքաղաք՝ Կիրանց գյուղից մինչև Երևան, մեկնարկեցին խորհրդանշական քայլերթ. «Միակողմանի զիջումների այս աղետալի ընթացքը վերջ ու սահման չունի. հյուսիսից հարավ մենք մեծ, անհասկանալի արյունահոսության մեջ ենք գտնվում, արնաքամվում ենք,– հայտարարեց Բագրատ սրբազանը:– Այս գործընթացը պետք է դադարեցվի»:

Պայքարի ուխտավորները երթը մեկնարկեցին աղոթքով և կիրանցի 96-ամյա տատի՝ հաղթանակով հետ գալու օրհնությամբ: Առաջին օրը երթի մասնակիցները, քայլ առ քայլ համախմբելով իրենց շարքերը, հատեցին Կիրանց–Սևքար–Ենոքավան–Իջևան ճանապարհը՝ գիշերը հասնելով Հաղարծնի վանք: Իջևանում Բագրատ սրբազանին և երթի մասնակիցներին ընդառաջ եկան մեծ ոգևորությամբ: Տավուշի թեմի «Տա Լույս» երգչախումբը դիմավորեց շարժման անդամներին՝ «Հայաստանը հիասքանչ է, Տավուշը՝ բացառիկ» բացականչություններով: Երգչախմբի անդամները երգեցին Հայաստանի ու Արցախի օրհներգերը, հետո Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողների հետ կատարեցին «Երազ իմ երկիր հայրենի» երգը: «Դուք պետք է ցավ չտեսնեք, չզգաք: Ինչ բեռ կա, մերն է»,– ասաց Բագրատ սրբազանը՝ օրհնելով բոլորին:

Մայիսի 5-ի առավոտյան Բագրատ սրբազանի կողմից Հաղարծնի վանքում մատուցվեց սուրբ պատարագ. «Հաղարծնի վանքում են մեր կորած խաչագրերը գտնվել, որոնց հեղինակը Խաչատուր Տարոնացին է: Զախ մատուռում մեր արքաներն են ամփոփված՝ Բագրատունյաց Գագիկ և Սմբատ թագավորները, որոնք լռությամբ մեզ ամեն անգամ դիմավորում և ճանապարհում են: Այստեղ բազմաթիվ արշավանքների են դիմադրել: Այս քարերն այլևս դադարել են քար լինելուց, որովհետև այստեղ, 10-րդ դարից սկսած, հազարավոր մարդկանց աղոթքներն են, հույզերը, հաղթանակները, պարտությունները: Եվ այս օրը ևս կարձանագրվի այս քարերի մեջ.... Այս աստվածային մեծ տունը մեզ առաջնորդության կարևոր ազդակ և ուղերձ է հղում: Մեր մեծ հայրը՝ Խորենացին, մեզ համարում էր վեհագույնը հյուսիսային ազգերի մեջ, և այս ընթացքը թող լինի անմահության երթ, որը մեզ կվերադարձնի մեր հայրերի ինքնությանն ու գիտակցությանը: Եվ, այո՛, նաև մեր մաքրման, ապաշխարանքի, զղջման ընթացքը թող լինի»:

Պատարագից հետո քայլերթը շարունակվեց դեպի Դիլիջան և Սևան: Օր առ օր պայքարն արագ թափ է առնում՝ ստանալով համազգային ու համաժողովրդական բնույթ: Մարդիկ վերջին հույսի և փրկության ակնկալիքով են դիմավորում պայքարողներին, հյուրասիրում ճանապարհին՝ ով ինչով կարող է: Ամենուրեք՝ Հայաստանում թե Սփյուռքում, նկատվում է համազգային ոգու արթնացում:

Հայ Եկեղեցու մի շարք թեմեր, հայտարարություններով կամ առանց դրանց, միանում են Տավուշի թեմի մեկնարկած շարժմանը: Առաջին միացողներից է Շիրակի թեմը՝ Տ. Միքայել արք. Աջապահյանի գլխավորությամբ. «Ես ամբողջությամբ սատարում եմ Բագրատ սրբազանի ընթացքը.... Ինչ նպատակ որ դրել են իրենց առաջ, թող այդ նպատակն իրականանա,– հայտարարեց Միքայել սրբազանը:– Ես մաղթում եմ, որ նրա լավատեսությունը հաղթի իմ հոռետեսությանը: Ես այստեղ ուզում եմ պարտություն գրանցել, մեծ ցանկություն ունեմ պարտություն գրանցելու»:

Դիլիջանում մարդիկ տներից դուրս էին գալիս, ողջունում պայքարի մասնակիցներին. «Մենք ճամփա ենք ընկել, որ այս ամբողջ ճանապարհը դառնա եռագույնի հաղթանակը սև ու սպիտակի վրա,– շարժման ուղերձն է հղում մարդկանց Բագրատ սրբազանը:– Սա պարզ, ազգային, հոգևոր ընկալումներով ապրող մարդկանց շարժում է, չունի որևէ գունավորում.... Մեր շարժումը ճշմարտության մասին է, լայն հասարակական շերտերի հաշտության մասին է, վախերի վերացման մասին է.... Մեր իղձերն ու երազանքները պետք է ավելի մեծ լինեն, քան մեր կյանքը: Չենք կարող սահմանափակված լինել մեր փոքր կյանքի օրերի մեջ»:

Սևանում շարժման ուխտավորներին դիմավորում են դհոլզուռնայով, հայրենասիրական երգերով ու դրոշներով: Նրանց՝ «Սըր-բա-զա՛ն» վանկարկումներին Բագրատ արքեպիսկոպոսը պատասխանում է. «Այս շարժումը, երթը, անձի կամ անձերի մասին չէ: Ես որևէ կերպ չէի ուզենա, որ սա դառնա կուռքերի շարժում, սա կուռքերի շարժում չէ, սա մարդկանց սրտերում արձանագրված տառապանքներից, նվաստացումներից ազատվելու, վերականգնվելու ու ինքնամաքրվելու շարժում է»:

Նույն օրը Սևանի թերակղզում Բագրատ սրբազանը կրակի շուրջ զրույց ունեցավ հավաքվածների հետ. «Շարժումն ինքնամաքրման, ինքնահաշվետվության, ինքնաճանաչողության համար պիտի անենք.... Ժողովուրդը կազատագրվի այս նվաստացումից, հոգևոր Հայաստանի հաղթանակը կնքելու ենք.... Այս երթը մեզ տալու է երկու բան՝ պատիվ և հայրենիք»:

Մայիսի 6-ին «Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժումը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ. «Օրվա ընթացքում իշխանական քարոզչամեքենան սոցցանցերում ակտիվորեն տարածում է շարժման ոգու և բովանդակության հետ որևէ առնչություն չունեցող ապօրինի գործողությունների մասին տեղեկություններ: Հնարավոր է, որ այս կերպ իշխանությունները նախապատրաստում են հերթական սադրանքները և հիմքեր՝ քաղաքացիների՝ բացառապես խաղաղ երթի նկատմամբ ապօրինի ուժ կիրառելու համար: Ելնելով այս իրավիճակից՝ ևս մեկ անգամ հայտարարում ենք, որ շարժումը հասարակական լայն շերտերի համար հաշտություն է քարոզում, մերժում է ցանկացած բռնություն, իսկ բոլոր նրանք, ովքեր կխոսեն հակառակի մասին, մեզ հետ կապ չունեն, մերժելի ու հատուկ ներդրված մարդիկ են»:

Մայիսի 7-ին քայլերթի մասնակիցները հասան Սոլակ գյուղ, որտեղ կատարեցին հոգևոր երգեր՝ «Տե՛ր, ողորմեա՛»: Այնուհետև երթը հասավ Չարենցավան, որտեղ անձրևի ու կարկուտի տակ հոծ խմբերով մարդիկ դիմավորեցին ամբողջովին թրջված երթի մասնակիցներին:

Բագրատ սրբազանի առաջնորդած շարժումն Աբովյան հասավ մայիսի 8-ին՝ ժամը 20:00-ին: Մեծ թվով քաղաքացիներ սպասում էին Աբովյանի մատույցներում՝ միանալու քայլերթին: Հաջակցության երթեր են մեկնարկել Հայաստանի տարբեր քաղաքներից. Շիրակի թեմի առաջնորդ Միքայել սրբազանինը՝ Գյումրիից, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես սրբազանինը՝ Երևանից. բոլորը շարժվում են դեպի Աբովյան՝ իրենց զորակցությունը հայտնելու «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը: «Մեր տառապանքները չեն կարող մեզ կքել.... Սա պետք է լինի մեր վերելքի պատմությունը, մեր կենսագրության վերականգնման պատմությունը»,– հավաքված բազմությանը դիմեց Բագրատ սրբազանը:

Երևանում մայիսի 9-ին բազմահազարանոց հանրահավաք կայացավ, ցուցարարների քանակն աննախադեպ էր՝ վերջին տարիների ցույցերի համեմատությամբ: Երթի մասնակիցները ճերմակ շապիկներով էին՝ հայրենիքի համար նահատակված հերոսների լուսանկարներով, Բագրատ սրբազանը՝ սպիտակ սքեմով. «Շարժումը կմարի հօգուտ հայրենիքի և ի փառս Աստծո»,– հայտարարեց սրբազանը:

Հաջորդ օրը՝ մայիսի 10-ին, շարժման մասնակիցները Երևանում շրջեցին բուհից բուհ՝ կոչ անելով համայն ուսանողությանը՝ միանալ պայքարին: Մինչ այսօր տեղի են ունենում քննարկումներ, անհնազանդության խաղաղ ակցիաներ, իրազեկման աշխատանքներ ու հանդիպումներ: Ժամառ ժամ շարժմանը միանում են նոր խմբեր:

Մայիսի 12-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում Բագրատ սրբազանը մասնակցեց սուրբ պատարագին և իր ուղերձը հղեց ժողովրդին. «Ոչ մեկը և ոչինչ չեն կարող հետ պահել մեզ՝ մեր երազանքների և իղձերի իրականացումից»: Նույն օրը՝ երեկոյան՝ ժամը 18:30-ին, դարձյալ կայացավ բազմահազարանոց հանրահավաք՝ պայքարը շարունակելու վճռականությամբ: Պայքարի ընթացքն այսօր էլ շարունակվում է:

Սկզբից մինչև հիմա Հայաստանից և աշխարհի տարբեր ծայրերից շարժմանը միացան և իրենց աջակցությունը հայտնեցին որոշ թեմեր, բազմաթիվ համայնքներ, կազմակերպություններ, խորհուրդներ, և այդ գործընթացը դեռ շարունակվում է՝ ընդսմին ինքնակազմակերպելով թե՛ սփյուռքահայությանը, թե Հայաստանում ապրող հայրենակիցներին:

Մայիսի 4-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանն իր անվերապահ աջակցությունը հայտնեց Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը՝ բարձրաձայնելով «իր մտահոգությունը Տավուշում իրականացվող անօրինական սահմանազատման և սահմանագծման վերաբերյալ», կոչ անելով ՀՀ իշխանություններին հրաժարվել պարտվողական քաղաքականությունից և միակողմանի զիջումներից. «Սրանում մենք ՀՀ անվտանգության փլուզման և պետականության գոյության կորստի իրական վտանգ ենք տեսնում: Հայաստանը մեր բոլորի հայրենիքն է, և մենք չենք կարող անտարբեր լինել պետականության կորստի նկատմամբ: Դրանով պայմանավորված՝ միանում ենք ազգային ու հայրենապաշտպան մղումներով կյանքի կոչված շարժմանը, խստորեն դատապարտում բիրտ ուժի կիրառումն իրենց օջախի ու հողի համար ոտքի ելած մեր հայրենակիցների նկատմամբ: Մենք բազմիցս նշել ենք ու հիմա էլ վերահաստատում ենք. թե՛ Տավուշի հարցը, թե՛ Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման չեղարկման հարցը կարմիր գծեր են, որոնք կարող են բերել անջրպետի, և որոնք չեն բխում թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի շահերից,– ասված է ԳԿԽ-ի վարչության հայտարարության մեջ:

Հայաստանի իշխանությունների զիջողական քաղաքականության դեմ մայիսի 4-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև ՀՅԴ-ի՝ Ավստրալիայի կենտրոնական կոմիտեն. «Տաւուշցիներու ուղերձը յստակ է. Տաւուշի մարզէն միակողմանի զիջումներ կը վտանգեն ամբողջ Հայաստանի ապահովութիւնը: Արդարև ռազմավարական հսկայական նշանակութիւն ունեցող այս տարածքներու յանձնումով, խոցելի կը դառնայ Հայաստանի պաշտպանութեան ամբողջ համակարգը, կը վտանգուի Հայաստանը մատակարարող հիմնական կազատարը, ինչպէս նաեւ Հայաստան–Վրաստան միջպետական մայրուղին: Աւելի՛ն, բոլոր զարգացումները կը յուշեն, որ այս միակողմանի զիջումները պիտի խթանեն հողային նոր պահանջներ:

➥ էջ 4

«Մեր իղձերն ու երազանքները պետք է ավելի մեծ լինեն, քան մեր կյանքը»

➥ էջ 3

Արդարև, Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիև բազմիցս պահանջած է հաստատումը այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցք»ին, եւ տակաւին այս շաբաթ Ազրպէյճանի մէջ պաշտօնապէս հիմը դրուեցաւ «Արևմտեան Ազրպէյճան» (եզր մը որ Ազրպէյճանի իշխանութիւնները կը գործածեն ներկայ Հայաստանի ամբողջ տարածքի մասին) հեռատեսիլի կայանին, որուն նպատակն է նիւթեր սփռել «գրաւեալ արևմտեան Ազրպէյճանի» մասին: Թշնամիին յարձակողական միտումները անզիջողական են: Եւ ուրեմն այդպէս պէտք է ըլլայ նաեւ մեր պայքարը: Դէմ ենք Հայաստանի իշխանութիւններու զիջողական, պարտուողական քաղաքականութեան: Կը հաստատենք մեր միահամուռ զօրակցութիւնը Տաւուշի հայրենակիցներուն եւ հայրենիքի փրկութեան անոնց պայքարին»:

Մայիսի 5-ին հայտարարություն տարածեց Արցախի թեմը՝ կոչ անելով բոլոր արցախցիներին միանալ շարժմանը: Հայտարարության մեջ նշված է. «Հազարամյա մեր բնօրրանի բռնազավթումի և կորստի վերքը դեռ չսպիացած՝ շարունակվում է միակողմանի զիջումների վտանգավոր գործընթացը, որը գոյաբանական լուրջ մարտահրավերների առջև է կանգնեցրել Հայաստանի պետականությունը: Հայրենիքն է մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի արժանապատիվ գոյության երաշխիքը, ուստի պետք է իմաստություն և ուժ գտնենք մեր մեջ՝ հետ շրջելու վայրընթաց գնացող այս անիվը, որպեսզի Մայր Հայրենիքը չունենա Արցախի դառը փորձառությունը.... Հզոր Հայաստանը ցանկությունն է մեր քաջարի նահատակների և հիմքը մեր ապագա բոլոր իղձերի կատարման»:

Մայիսի 5-ին շարժմանն աջակցություն հայտնեց Ցյուրիխի հայ ակադեմիականների միությունը՝ իր խորին մտահոգությունը հայտնելով Հայաստան–Ադրբեջան անհամաչափ և միջազգային նորմերին անհամապատասխան սահմանազատման հետ կապված». «Արցախի կորստից հետո այսօր արդեն Հայաստանն է գոյաբանական խնդրի առջև հայտնվել, որի հիմնական պատճառը ՀՀ գործող կառավարության անհեռատես և պարտվողական քաղաքականությունն է: Այսօր, առավել քան երբևէ, Սփյուռքը չի կարող այլևս անտարբեր մնալ ՀՀ իշխանությունների միակողմանի զիջողական և հակասահմանադրական քայլերի նկատմամբ: Մենք բարձր ենք գնահատում Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արք. Գալստանյանի և մեր մտահոգ հայրենակիցների նախաձեռնած շարժումը՝ ի պաշտպանություն Հայաստանի այսօրվա սահմանների: Ցյուրիխի հայ ակադեմիականների միությունն իր լիակատար աջակցությունն է հայտնում «Տավուշը հանուն հայրենիքի» և նմանատիպ համաժողովրդական, ապակուսակցական շարժումներին և լիահույս է հայ ժողովրդի պատմական և իրավական արդարության վերականգնման հարցում»:

Մայիսի 6-ին Կիպրահայոց թեմն իր անվերապահ աջակցությունը հայտնեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը՝ կոչ անելով ՀՀ իշխանություններին հրաժարվել միակողմանի զիջումներից և պարտվողական քաղաքականությունից՝ «հեռու մնալով Տավուշում իրականացվող ապօրինի սահմանագծման և սահմանազատման գործընթացից, որով կդրվի մեծ վտանգի սկիզբը, եթե հաշվի առնենք Ադրբեջանի ծավալապաշտական սպառնալիքները, որը Հայաստանը համարում է «Արևմտյան Ադրբեջան»:

Մայիս 6-ին հայտարարություն տարածեց նաև ՀՅԴ-ի Արևելյան ԱՄՆ-ի կենտրոնական կոմիտեն. «Հայաստանի Առաջին հանրապետության Մայիս 1918-ի պատմական իրագործման օրերուն, Նիկոլ Փաշինեանի վարչակարգը ընտրեց քաղաքական ուղի մը, որուն նպատակն է Հայաստանը հպատակ դարձնել մեր թշնամիներուն, ինչ որ անխուսափելիօրէն պիտի առաջնորդէ հայրենիքի քանդումին, եթէ այս վարչակարգը շարունակէ իշխանութեան վրայ մնալ.... Հարցադրումի տակ են Հայաստանի արժանապատուութիւնը, ապահովութիւնն ու գոյութիւնը: Հայորդին ունի ուժն ու կարողութիւնը՝ Փաշինեանի վարչակարգը տապալելու, որպէսզի կանխուին յաւելեալ վնասներ: Այսօրուան դիմադրութեան նպատակն է ստեղծել համաժողովրդային շարժում մը, փրկելու համար հայրենիքը: Շարժում մը, որուն գաղափարախօսութիւնը խարսխուած ըլլայ Մայիս 1918-ի ոգիին ու խորհուրդին վրայ: Մենք կը կանգնինք Հայաստանի մեր եղբայրներուն եւ քոյրերուն կողքին, կասեցնելու համար 15 Մայիսին մեր հողերուն յանձնումը՝ ցեղասպանական ոճիրներ գործած Իլհամ Ալիևի վարչակարգին: Մենք նաեւ զօրավիգ կը կանգնինք Փաշինեանի վարչակարգը տապալելու եւ ազգային ղեկավարութեան մը իշխանութեան հասցնելու բոլոր ճիգերուն»:

Հայաստանում գործող Հայկական բժշկական ասոցիացիան ևս մայիսի 7-ին պաշտոնական հայտարարությամբ միացավ Բագրատ սրբազանի առաջնորդած շարժմանը՝ նշելով, որ բժիշկներն ավտոերթով կմիանան Բագրատ սրբազանին Չարենցավանում:

Մայիսի 7-ին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն վերստին քննարկեցին Տավուշում ստեղծված իրավիճակը, և Արամ Ա-ն հեռախոսազրույցում իր ամբողջական զորակցությունը հայտնեց Հայաստանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ Գերագույն հոգևոր խորհրդի կողմից հրապարակված հայտարարությանը՝ «շեշտելով Հայ Եկեղեցւոյ առանցքային դերակատարութիւնը հայ ժողովուրդը ու Հայաստանը յուզող տագնապներու յաղթահարման գծով»:

Ամբողջական զորակցության կոչով հանդես եկան Իրաքի հայոց առաջնորդարանը և Իրաքում գործող հայկական կազմակերպությունները՝ միանալով «Մայրենի Եկեղեցւոյ բոլոր հայրենաբնակ հոգեւորականներուն եւ թեմական առաջնորդներուն.... որոնք Տաւուշի մարզի բնակչութեան կողքին են սպառնալի եւ օրհասական այս օրերուն»:

«Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմն առաջին օրվանից է միացել ստի ու կեղծիքի դեմ պայքարին»՝ լրագրողի հարցին ի պատասխան ասել է Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Հովնան եպս. Հակոբյանը՝ հավելելով, որ իրենք ևս մասնակցում են Բագրատ սրբազանի առաջնորդությամբ Կիրանց գյուղից մեկնարկած քայլերթին:

Շարժմանը միացան և իրենց ամբողջական զորակցությունը հայտնեցին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տեր Հայկազուն արք. Նաջարյանը, թեմական խորհուրդը և եկեղեցական դասը. «Համազգային ընդվզում ստեղծած հայրենի կառավարութեան միակողմանի հողային զիջումները դատապարտելի են: Մեր ձայնը կը միացնենք Վեհափառ Հայրապետին, Գերագոյն հոգեւոր խորհուրդին եւ բազում թեմական առաջնորդներուն եւ կը պահանջենք Հայաստանի իշխանութիւններէն սթափիլ եւ վերջ տալ զիջումի քաղաքականութեան, տէր կանգնիլ Հայաստանի ամբողջականութեան եւ ազգային իրաւունքներուն: Տէր Բագրատ արք. Գալստանեանի գլխաւորած շարժումին նպատակը արդարութեան եւ իրաւունքներու պահանջքին գործադրութիւնն է»:

Զորակցություն են հայտնել Հունահայոց ազգային առաջնորդարանը, Հայ Կաթողիկե Եկեղեցին, Հունաստանի մի շարք կազմակերպություններ: Համատեղ հայտարարության մեջ նշված է. «Արցախի յանձնումէն ու հայաթափումէն ետք, ազգովին տեսանք թէ միակողմանի զիջումները միայն թուլացում բերին Հայաստանին եւ երկրի սահմաններուն, մինչդեռ Ատրպէյճանը գրաւման տակ կը պահէ Հայաստանի միջազգայնօրէն ճանչցուած տարածքները, իր ախորժակները սրելով եւ բացայայտօրէն խօսելով իր յարձակողապաշտ նպատակներուն մասին: Այս ճակատագրական հանգրուանին մեր զօրակցութիւնը կը յայտնենք բոլոր ջանքերուն, որոնք նպատակ ունին մեր արժէքները պաշտպանելու, Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը ամուր պահելու եւ ազգային մեր միասնականութիւնը ամրապնդելու»: Ավելի վաղ՝ մայիսի 8-ին, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը միացել է Վիրահայոց թեմը՝ առաջնորդ Տեր Կիրակոս եպս. Դավթյանի գլխավորությամբ, նաև Վրաստանի հայ համայնքը:

Հաջակցություն «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման՝ արտերկրում տեղի ունեցան ցույցեր և քայլերթեր: Գլենդելում մայիսի 8-ին ՀՅԴ-ի Արևմտյան Ամերիկայի երիտասարդական միության կազմակերպությամբ կայացավ երթ՝ Սուրբ Մարիամ եկեղեցու բակից դեպի Հայաստանի հյուպատոսարան: Մայիսի 12-ին ցույցեր տեղի ունեցան եվրոպական 11 երկրի շուրջ 30 քաղաքում: Գործընթացը շարունակվում է: Հանդես եկան նաև առանձին անհատներ՝ մշակութային գործիչներ, գիտնականներ, արվեստագետներ, զինվորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Բոլորը փաստում են մեկ երևույթի մասին. շարժումը բացառիկ հնարավորություն է՝ վերագտնելու մեր ազգային ուժականությունը և տեր կանգնելու մեր հայրենիքին:

Այսպիսով՝ Տավուշի սրբազանի առաջնորդած շարժումն այլևս ազգային գիտակցության մեջ ամրագրվում է որպես սրբազան պայքարի մի նոր պատմություն:

Թաթուլ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Անդաստանի ծեսը

Տարվա ընթացքում Անդաստանի ծեսը կատարվում է հետևալ տոն օրերին. Տյառնընդառաջին (Տրնդեզ), Ծաղկազարդին (Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ), Ս. Հարության տոնին (Զատիկ), Նոր Կիրակի կամ Կրկնազատիկին (Կանաչ-Կարմիր կիրակի), Զատկից հետո երրորդ և չորրորդ կիրակիներին, Սուրբ Խաչի Երևման տոնին (հինգերորդ կիրակի), Զատկից հետո վեցերորդ և յոթերորդ կիրակիներին, Քրիստոսի Համբարձման տոնին, Հոգեգալստյան տոնին, Կաթողիկե Ս. Էջմիածնի հաստատման տոնին, Տիրոջ Պայծառակերպության տոնին (Վարդավառ), Աստվածածնի Վերափոխման տոնին (Խաղողօրհնեք) և Սուրբ Խաչի Վերացման տոնին (Խաչվերաց):

Որոշ տոների դեպքում Անդաստանի ծեսը կատարվում է երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան ժամերգությունից առաջ կամ ընթացքում, որոշ տոների դեպքում՝ միայն առավոտյան կամ երեկոյան ժամերգության ժամանակ: Օրվա ընթացքում երկու անգամ Անդաստան է կատարվում Ս. Հարության տոնին, Համբարձման տոնին, Զատկի յոթերորդ կիրակի օրը (Երկրորդ Ծաղկազարդ), Հոգեգալստյան տոնին (Պենտեկոստե), Ս. Էջմիածնի տոնին, Վարդավառին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին և Խաչվերացին:

Անդաստանի ծեսն ունի մեր Եկեղեցու կողմից մշակված իր արարողակարգը, որին մասնակցում են տվյալ եկեղեցում ծառայող բոլոր եկեղեցական հոգևորականներն առանց բացառության, ըստ եկեղեցական աստիճանավորման: Քանի որ այդ ծեսը կատարվում է եկեղեցական տոների ընթացքում, ապա ծիսական բոլոր իրերը (եկեղեցական ծեսերի ընթացքում կիրառվող բոլոր իրերը կոչվում են «զարդեր») և հանդերձները տոնական են: Անդաստանի ընթացքում կիրառվող զարդերն են. խաչվառը, ձեռաց խաչը, Ավետարանը, շուրջառը, բուրվառը, մոմակալը, քշոցը: Յուրաքանչյուր Անդաստանի ժամանակ թափորում կիրառվող խաչվառների պատկերները համապատասխան են տվյալ տոնին, ինչպես նաև սուրբգրային ընթերցումները կատարվում են հավուր պատշաճի:

Ելնելով այն հանգամանքից, որ Անդաստանի կարգը կատարվում է հանդիսավորությամբ և մեծ շուքով, այսինքն՝ հանդես է և տոնախմբություն, ապա արարողության ղեկավարը Հանդիսադիրն է՝ տվյալ եկեղեցու առաջնորդը կամ եպիսկոպոսը, կամ էլ տվյալ պահին ներկա ավագ հոգևորականը: Նա է ծեսի ընթացքում օրհնում աշխարհի չորս ծագերը, և թափորը շարժվում է իր ուղղորդությամբ: Երկրորդ կարևոր մասնակիցը տվյալ օրվա աղոթասացն է, որը շուշպայով (թաշկինակ) բռնում է Ավետարանը՝ հանդեսը շարժվում է իր ուղղությամբ: Անդաստանի թափորն ունի հետևալ կառուցվածքը. առջևից հաջորդաբար գնում են բուրվառակիրը, խաչվառակիրը, մոմակիրները, այնուհետև օրվա աղոթասաց հոգևորականը՝ Ս. Ավետարանը ձեռքին բարձր, ի տես ժողովրդի պահած: Խաչվառի ու Ավետարանի միջև սարկավագների բազմությունն է, թափորը եզրափակում են քշոցակիրները:

➥ էջ 6

Եկեղեցին չի կարող պարտվել....

Հարցազրույց «Զենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոն-հիմնադրամի ղեկավար Աբրահամ Գասպարյանի հետ

— Պարո՛ն Գասպարյան, աշխարհաքաղաքական վերաբաժանումների մեծ գործընթացում Հայաստանի գոյաբանական հիմնախնդիրը, ըստ Ձեզ, կարո՞ղ է դրականորեն վճռել Բագրատ սրբազանի առաջնորդած շարժումը:

— Աշխարհաքաղաքական վերաբաժանումների է ենթարկվում ամբողջ աշխարհը, և այստեղ շատ կարևոր եմ համարում կենտրոնանալ ոչ այնքան ներհայաստանյան խոսույթի այն հատվածին, որ երկար տարիներ՝ համենայնդեպս վերջին վեց տարվա ընթացքում, սև ու սպիտակի բաժանման, ճիշտ-սխալ նժարելու պայմաններում մենք փորձում ենք ընդամենը մեր վաղվա օրվա մասին մտածել: Այս շարժումը եկավ ասելու, որ մենք ոչ միայն վաղվա, այլև մյուս օրվա և մեր սերունդների ապագայի համար պիտի մտածենք, իսկ դա նշանակում է ճիշտ ձևակերպել խնդիրը: Խնդիրը ձևակերպված է այսպես. հայ ժողովուրդն այս տարածաշրջանում՝ իր հայրենիքում՝ Հայկական բարձրավանդակի արևելյան հատվածում, պիտի մնա՞, և Հայաստանը՝ որպես ինստիտուցիոնալ մարմնավորում հանդիսացող պետություն, պետականության կրող, պիտի մնա՞, թե՞ ոչ:

Եթե խնդիրն այսպես ենք ձևակերպում, ապա բոլոր այն իրադարձությունների գնահատականները, որ վերջին մի քանի տարվա՝ հատկապես հետպատերազմյան ընթացքում մենք տալիս էինք, տեղն են ընկնում: Ինչո՞ւ, որովհետև այն քաղաքականությունը, որը վարվել է պատերազմից հետո, որը մեզ կանգնեցրել է իսկապես գոյաբանական խնդիրների առաջ՝ ձախողված արտաքին դիվանագիտությամբ, ոչդաշնակցային, ավելի շատ թշնամական օղակը սեղմելով Հայաստանի նկատմամբ, ավանդական, բնական և պոտենցիալ դաշնակիցներին վանելով առհասարակ և նրանց հետաքրքրությունները չառաջացնելով մեր պետության գոյաբանական խնդրի հարցում, այո՛, մեզ կանգնեցրել է այն փաստի առաջ, որ խնդիրը ձևակերպում ենք այսպես. վճռջ պետք է տրվի, պետք է ընդհատվի՞ կորուստների այն շղթան, որ մեզ ուղեկցում է 44-օրյա պատերազմից հետո բոլոր առումներով: Այս իմաստով շատ եմ կարևորում հոգևորականի անբասիր կենսագրություն ունեցող և հանրության լայն շերտերի, եթե չասեմ՝ Հայ Առաքելական Եկեղեցու հետևողների գերակշիռ մասի կողմից հարգանք վայելող և Վեհափառի, այսինքն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ստացած Բագրատ սրբազանի առաջնորդած այս շարժումը, որը, կարծում եմ, պիտի հասնի իր տրամաբանական ավարտին:

— Այս օրերին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և մասնավորապես Բագրատ սրբազանը թիրախավորվում են ապազգային տարբեր ուժերի կենտրոններից: Դուք՝ որպես բացառիկ վերլուծաբան՝ մասնագիտական պատրաստականության և բարոյական արժեհամակարգի առումով, ինչպե՞ս կբնորոշեք Հայոց Եկեղեցու դիրքորոշումը և Բագրատ սրբազանի կերպարը:

— Հայ Եկեղեցու նկատմամբ սանձազերծված արշավը նոր չի սկսվել: Հայ Եկեղեցին թիրախում է հայտնվել դեռ 1991 թ. անկախության հետո: Զանազան կազմակերպություններ, օտարերկրյա ուժերի կողմից ֆինանսապես սնուցվող տարատեսակ կառույցներ միշտ իրենց առանցքում են պահել Հայ Եկեղեցու արժեքաբանական և բարոյագիտական ընկալումների թիրախավորումը: Ես այստեղից կսկսեի, որովհետև սա միայն ներհայաստանյան գործընթաց չէ, սա գլոբալ պրոցես է, որի դրսևորումը Հայաստանում մենք զգացինք վերջին երեսուն տարվա ընթացքում: Ես գիտեմ, իհարկե, թե ինչ աշխատանք է տարել Եկեղեցին՝ իր նվիրապետական չորս աթոռներով (երկար ժամանակ զբաղված եմ եղել մեր Եկեղեցու քրիստոնեական և ազգային առաքելությամբ, տեղյակ եմ նաև միջազգային էկումենիկ շարժումների համատեքստում), և ոչ միայն Էջմիածինը, այլև Անթիլիասը բավական հաջողություններ գրանցել է թե՛ քրիստոնյա—իսլամ երկխոսության, թե՛ ներքրիստոնեական երկխոսության առումով: Հայաստանյայց Եկեղեցին՝ որպես առաջինը քրիստոնեությունն ընդունած պետության գլխավոր Եկեղեցի, գիտեմ՝ ինչ դերակատարում է ունեցել այդ ամեն ինչում, այդ ամբողջն ինձ տեսանելի է եղել, բայց բավարար չի եղել, որովհետև, կարծում եմ, մենք հոգևորական դասի սոցիալական տարբեր շերտերի հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման խնդիր ենք ունեցել, և այդ խնդրի առկայությունն է, որ մեզ կանգնեցրել է հենց այս՝ թիրախ դառնալու խնդրի առաջ:

Բայց ոչ միայն Հայ Եկեղեցին, այլև քրիստոնեական արժեքներն են ընդհանրապես թիրախ դառնում ամբողջ աշխարհում վերջին մի քանի տասնամյակում, և աղանդավորական տարատեսակ շարժումներ, կազմակերպություններ միշտ փորձում են ինքնահաստատվել Եկեղեցու թույլ տված բացթողումների հաշվին: Այստեղ շատ կարևոր է այն խնդիրը, որ այդ աղանդավորական շարժումները կամ կազմակերպությունները ո՛չ արժեքաբանական իմաստով են համարձակվում մարտահրավեր նետել Հայ Եկեղեցուն, որովհետև ավելի քան 1700 տարվա կարծրացած, այսպես ասած՝ երկաթբետոնե ցեմենտով ամրացած գաղափարաբանությունը հեշտ չէ տորբեդահարել կամ արժեքաբանական առումով իմաստազրկել, որովհետև ի վերջո քրիստոնեական երկու Մայր Եկեղեցի կա՝ Կաթոլիկ և Ուղղափառ, և Հայ Եկեղեցին՝ որպես ուղղափառության դրոշակակիր, մեծ հաշվով իր իմացաբանական, կրոնա-փիլիսոփայական, արժեքաբանական խնդիրները վաղուց՝ դեռ Նիկիայի ժողովից է ճշտել և ամբողջ աշխարհին հայտնել, այնպես որ հեշտ չէ Հայ Եկեղեցու գաղափարաբանական հենասյուները տորբեդահարել: Այդ իսկ պատճառով Հայ Եկեղեցուն թիրախ դարձնողներն ավելի շատ հոգևորականության գործունեության կամ անգործության մատնվելու խնդիրներն են բերում օրակարգ, ինչը շատ ավելի հասանելի է հասարակ մարդկանց, այսինքն՝ մարդիկ չեն խորանում, դիցուք, Թովմա Աքվինացու և Գրիգոր Նարեկացու ուսմունքների համեմատության մեջ, չեն կենտրոնանում դրանց վրա, իրենց ավելի շատ հետաքրքրում է, թե այսինչ կամ այնինչ հոգևորականը կենցաղում ինչպե՞ս է իրեն պահում, ավելի շատ մո՞տ է մարդուն, ընտանիքին, հասարակությանը, թե՞ ոչ: Այստեղ է, որ, կարծում եմ, բացթողումներ եղել են, և դրանից օգտվել են զանազան կազմակերպություններ:

Խնդիրը պետք չէ ուռճացնել, խնդիրը այդ թիրախավորող կազմակերպությունների շատ պարզմիտ քայլերն են, և այդտեղ է, որ իրենք կարողանում են՝ հանրային կապերն ուժեղ պահելով, կրոնական, այսպես ասած, մարքեթինգը հարմարեցնելով շուկայի պահանջներին, տեխնոլոգիական առաջընթացին: Եվ Հայ Եկեղեցու սպասավորների պասիվ լինելն առաջացնում է այդ դիսոնանսը, մեծ հաշվով այդ տարբերությունը: Թեև Հայ Եկեղեցու՝ համենայնդեպս թե՛ Էջմիածնի, թե՛ Անթիլիասի՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքները համակարգողները տարբեր ժամանակներում լուրջ աշխատանքներ տարել են՝ հանդիպումներ, թեմատիկ քննարկումներ, ուղեցույցների հրատարակում և այլն, բայց նկատվում է, որ առաջընթացն առավելապես զգալի է աղանդավորական շարժումների դեպքում, որովհետև նրանց մեթոդները շատ ավելի արդիական են, քան մեր Եկեղեցու ավանդական, կարծրացած մոդելները:

Գիտե՞ք, պարտադիր չէ, որ հանրության մեծ մասն իմացաբանական կամ դավանաբանական առումով հետևի Հայ Եկեղեցու քարոզներին, պատարագներին և այլն. մարդիկ սովորաբար կենցաղի մեջ խրված են, և աղանդավորական կազմակերպությունները կարողանում են հենց կենցաղում հնարավորություն ստեղծել. այդտեղ իրենց համար ավելի հեշտ է: Եկեղեցու ուսմունքը բացատրելը բարդ գործ է, ամեն մարդու գործ չէ, նաև մենք գործ ունենք արժեքների հետ, իսկ արժեքներին ոչ բոլորն են մոտենում: Կարծում եմ՝ ոչ թե «ինչ»-ն է խնդիրը, այլ՝ «ինչպես»-ը, և այդ «ինչպես»-ի մեթոդաբանության փոփոխության խնդիր պետք է դրվի:

Իսկ գլոբալ առումով պարզից էլ պարզ է, որ Հայ Եկեղեցին ազգային այն անմնացորդ, անվիճարկելի արժեքն է՝ թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ գաղափարական առումով, որին ասպարեզից հեռացնելը ոչ թե հեշտ չէ, այլ գրեթե անհնար է: Ինքներդ գիտեք, որ նույնիսկ պետականություն ենք կորցրել, բայց Եկեղեցին շարունակել է մնալ ազգի իղձերի, նպատակների և քրիստոնեական հավատի մարմնավորում-տաճարը: Եկեղեցուն շարքից հանելը գրեթե անհնարին է նաև այն պատճառով, որ գործ ունենք մի կառույցի հետ, որի հետ խոսում է ամբողջ աշխարհը: Մինչդեռ, ցավոք սրտի, Հայաստան պետության հետ ամբողջ աշխարհը չի խոսում:

Եկեղեցին ու պետությունը, իմ համոզմամբ, ուժեղ երկրի պարագայում մեկը մյուսին փոխլրացնող են, և ես անձամբ չեմ պատրաստվում զիջել ո՛չ իմ պետության, ո՛չ էլ Եկեղեցու դիրքերը: Այստեղ առաջնահերթության խնդիր չկա. երկուսն էլ կառույցներ են, որոնք պիտի ուղեկցեն ժողովրդին. մեկը՝ հոգևոր, մյուսը՝ քաղաքական առումով: Բայց այս պահի դրությամբ ամբողջ աշխարհը խոսում է Հայ Եկեղեցու հետ՝ շատ լավ հասկանալով նրա արմատները, կառուցվածքը, ավանդույթները, դերը, նշանակությունը: Եվ եթե այսօր Եկեղեցին է հնչեցնում ղողանջները և ահազանգում, որ կանգնած ենք գոյաբանական խնդրի առաջ, և այդ խնդրին պետք է համազգային լուծում տալ, ուրեմն, պահն իրապես օրհասական է:

Իսկ համազգային լուծումը չի կարող լինել սև ու սպիտակի համատեքստում, չի կարող բաժանարար գծեր պարունակել իր մեջ, որովհետև դա Եկեղեցու առաքելությանը դեմ է, որովհետև հավատացյալ հոտն անխտիր գտնվում է Եկեղեցու և Աստծո իշխանության տիրույթում, որովհետև մեր Վեհափառ Հայրապետներն իրենց իշխանությունն ստանում են Աստծուց, իսկ Աստված բաժանարար գծեր չի դնում մարդկանց մեջ:

Եվ այս ամբողջը պետք է ճիշտ ներկայացնել հանրությանը, որպեսզի մարդիկ հասկանան, որ սա քաղաքական խնդիր չէ, և եթե Եկեղեցին մտնում է մի գործընթացի մեջ, որտեղ չկա իշխանության բաժանման, դափնիներ կիսելու խնդիր, այլ կա բացառապես համազգային համախմբման, միասնության ամրապնդման, ատելության քարոզի ոչնչացման և համազգային նպատակների իրագործման համար ուժեղ պետություն ստեղծելու խնդիր, ապա այս շարժումը, կարծում եմ, պետք է ողջունեն բոլոր առողջ, ազգային-պետական մտածողություն ունեցող շերտերը, և նաև բնական է, որ պիտի տորբեդահարեն այս ճամբարի հակառակ ճակատում գտնվողները, այդ թվում՝ այնպիսի կազմակերպություններ, որոնք անցած 15—20 տարվա ընթացքում անընդհատ փորձել են Եկեղեցու սպասավորաց դասի կենցաղային խնդիրներն ընդհանրացնել և դա վերագրել Եկեղեցու թերությանը: Սա քաղաքական գիծ է, որը, կրկնում եմ, ամբողջ աշխարհում է ընթանում, հատուկ չէ միայն Հայ Եկեղեցուն: Բայց քանի որ Հայաստանի գործող իշխանությունը մեր պետությունը ներգրավեց այնպիսի պատերազմի մեջ, որտեղից մենք շատ կորուստներով դուրս եկանք, քանի որ այս իշխանությունը տապալել է արտաքին դիվանագիտությունը, չունի -իզմեր, գաղափարական հենքեր և այլն, Հայ Եկեղեցին իր համար միշտ եղել է քննադատության թիրախ: Այս վարչախումբը, որ վերջին վեց տարվա ընթացքում իշխում է Հայաստանում, միշտ բացասական, արգահատալից վերաբերմունք է ունեցել Հայ Եկեղեցու հանդեպ, ինչն իրենց քաղաքական կենսագրության անբաժանելի մասն է այլևս:

Այսպիսով՝ երբ այս բոլոր փաստերը կողք կողքի ենք դնում, խճանկարն ամբողջանում է, ու պարզ է դառնում, որ կա ուղեգիծ ամբողջ աշխարհում, այդ ուղեգծի ներկայացուցիչները Հայաստանում իշխանություն են, և իրենք ամեն ինչ անում են, որ հարվածի տակ լինի ազգային գլխավոր կառույցը՝ Եկեղեցին:

— Իսկ Բագրատ սրբազանի կերպարն ավելի մանրամասն կբացահայտե՞ք....

— Բագրատ սրբազանին ես անձամբ ճանաչում եմ շատ վաղուց: Նա ոչ միայն իմ, այլև իմ ընտանիքի սրբազանն է, խորհրդատուն է, ընկերն է, ավագ եղբայրը՝ բացի իր եկեղեցական աստիճանից ու կոչումից: Նա մեր ընտանիքի ամենաճգնաժամային պահերին եղել է օգնողի, հարցեր լուծողի դերում: Բացի իմ անձնական համակրանքից և իր խոհափիլիսոփայական մտքերի ջատագովը կամ գաղափարակիցը լինելուց՝ ես նաև նրա մեջ միշտ տեսել եմ առաջնորդի այն կերպարը, որը գիտելիքով լիքն է, որը չսասանվող հավատ ունի առ Աստված և առ Հայ Եկեղեցին, որն ունի կազմակերպչական տաղանդավոր ունակություններ, կարգապահ է, խստապահանջ, իր խոսքի տերը: Սրանք առաջնորդին բնորոշ հատկություններ են, և դեռ չեմ խոսում բնատուր խարիզմայի մասին: Եվ իր արժեքային համակարգի ու վարքաբանության ամբողջ համադաշնությունը նա ներդնում է մի գործի մեջ, որը կոչվում է հայրենիքի փրկություն կամ պարտությունների խափանում:

— Գործող իշխանության քաղաքականության արդյունքում ունենք ծանրագույն և անդառնալի կորուստներ՝ տարածքային ու մարդկային իմաստով: Ավելին՝ այսօր դրված է Հայաստանի և հայ ժողովրդի լինելության հարցը: Ո՞րն է ելքը, ի՞նչ պետք է անել, որ ճակատագրական այս պահին առնվազն կասեցնենք աղետաբեր ընթացքը, կանխենք հերթական կորուստներն ու զիջումները՝ Հայաստանի երկարաժամկետ անվտանգության հաշվին:

— Տեսեք՝ Հայաստանի գործող իշխանությունն ինչ արեց այս տարիների ընթացքում. զիջեց Արցախը, քարկոծեց Հայոց Եկեղեցուն, ոտնահարեց ազգային արժեհամակարգն առհասարակ, գրեթե խզեց կապերը Սփյուռքի հետ, ծաղրի ենթարկեց մեր պետականակերտ ազգի պատմությունը և վիճարկեց 1918, 1991 թթ. հայկական պետականաշինության ամբողջ փորձը: Եթե մենք այս դիտանկյունից ենք նայում, ստացվում է, որ այս իշխանությունը եկել է՝ քանդելու ամեն ինչ: Իրենից է սկսվել և շարունակվելու է այս մռայլ, անորոշ, անշոշափելի ապագան, որը չի տեղավորվում հայի ազգային, պետականաստեղծ մտածողության մեջ:

Փորձեցին անընդհատ մեր մեջ սերմանել, որ մենք պետություն ունենալուն արժանի ժողովուրդ չենք. դրա համար սերմանվեց ներազգային ատելություն, թշնամանք: ➥ էջ 7

Հաջողություն աշխատանքի և համախմբման ծնունդ է

Հարցազրույց Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի հետ

— Սրբազան, ինչո՞ւ մեզ չհաջողվեց պահել այնքան թանկ գնով ձեռք բերվածը: Ո՞ր դաշտում ենք մենք կրել հիմնական պարտությունը՝ ռազմակա՞ն, մշակութայի՞ն, կրթակա՞ն, թե՞.... Ո՞րն էր մեր գլխավոր թերացումը կամ բացթողումը:

— Ցանկացած ձեռքբերում, եթե ժամանակի ընթացքում չի լրացվում, չի ամրապնդվում, դառնում է ընդամենը ժամանակավոր: Արցախի պարագայում անհրաժեշտ էր հզորացնել պետականությունը բոլոր առումներով՝ թե՛ ռազմական, թե՛ կրթական, թե՛ հոգևոր: Բացթողումը երևի այն մտածումն էր, որ Արցախյան ազատամարտի հաջողությունը մեկընդմիշտ էր լինելու: Սակայն, ցավալիորեն, կյանքը ցույց տվեց, որ 30 տարի շարունակ բավականաչափ չէինք հզորացրել Արցախը, որպեսզի մարտահրավերներին կարողանայինք դիմագրավել:

— Պայքարի տարիներին Ամարաս վանքի վանահայրն էիք: Երբ արցախյան ազատագրական պայքարը հաղթանակով պսակվեց, եկեղեցական, հոգևոր-մշակութային կյանքը ևս վերելք ապրեց: Վերաբացվեցին վանքերը, եկեղեցիները՝ այդ թվում Ղազանչեցոց եկեղեցին, կառուցվեցին նորերը: Ինչպե՞ս կբնութագրեք այդ ժամանակահատվածը Հայ Առաքելական եկեղեցու գործունեության համատեքստում:

— Այդ ժամանահատվածը հոգևոր վերելքի ժամանակահատված էր: Երբ 1989 թվականին Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կոնդակով վերահիմնվեց ՀԱԵ Արցախի թեմը, սկսվեց Արցախի հոգևոր վերազարթոնքը: Անսահման մեծ էր Եկեղեցու դերն Արցախի կյանքում՝ մանավանդ խորհրդային շրջանի բերած հոգևոր երաշտից հետո, երբ ողջ Արցախում գեթ մեկ գործող եկեղեցի չէր մնացել:

— Շուշիի ազատագրումը բացառիկ հաղթանակ էր: Որտե՞ղ էիք 1992-ի մայիսի 8-ին և 9-ին: Ինչպե՞ս եք ստացել լուրը: Այդ անմոռանալի իրադարձության ո՞ր դրվագն է ամենավառը մտապահվել Ձեր հիշողության մեջ:

— 1992 թվականի մայիսի 8-ին եղել եմ Գանձասարում, աղոթում էինք մեր բանակի և մեր ժողովրդի հաղթանակի համար: Երբ իմացել եմ «Հարսանիքը լեռներում» ռազմական գործողության հաջողության մասին, շտապել եմ գնալ Շուշի: Քանի որ դժվարին ժամանակներ էին, և մեքենաների համար վառելիք դժվար էր գտնվում, ոտքով գնացի Շուշի և արդեն մայիսի 10-ին եղել եմ ազատագրված Շուշիում:

— Սրբազա՛ն, խնդրում եմ անդրադառնալ 2023-ի սեպտեմբերի 19-ին թշնամու հարձակմանը և Արցախի պաշտպանության բանակի խիզախ դիմադրությանը: Այդ մասին գրեթե չի խոսվում:

— 2023 թվականի սեպտեմբերին Արցախի բանակը, հակառակ թշնամու սպասելիքներին, արժանապատիվ և անձնուրաց կռիվ տվեց՝ չնայած այն փաստին, որ ՀՀ-ի կողմից ռազմական օգնություն չեղավ: Սակայն իննամսյա շրջափակումը, դրա հետևանքով առաջացած սննդի ու վառելիքի սաստիկ պակասը իրենց բարոյահոգեբանական և ֆիզիկական հետևանքները թողեցին: Թեև ռազմական առումով դեռ ուժ և պատրաստակամություն կար կռվելու, սակայն սովը և վառելիքի պակասը թույլ չտվեցին դիմադրությունը երկար շարունակել:

— Այսօր Արցախի պատմամշակութային ժառանգությունը ոչնչացման խիստ վտանգի տակ է: Մեր վանքերն ու եկեղեցիները կրկին մատնվել են անարգանքի և հիմնովին ավերման, իսկ մենք վառ ենք պահում հույսը, որ մի օր վերադառնալու ենք ու նորից ենք կառուցելու: Սա՝ այս կրկնվող պատմությունը, մեր ազգի ճակատագի՞րն է: Ինչո՞ւ է այսպես:

— Վերադարձի հույսը պետք է միշտ վառ պահել: Եվ երբեք չպետք է կարծել, որ անհաջողությունը ճակատագիր է: Ճակատագիրն ամեն ազգ իր ձեռքով պետք է կերտի: Եթե մենք այսօր էլ համախմբված, պատրաստակամ և ուժեղ լինենք, ապա վերադարձի հնարավորությունը բնավ անիրատեսական չի լինի: Առհասարակ՝ եթե հանձնվում ես կույր ճակատագրին, ապա դատապարտված ես միշտ նույն անհաջողությունների միջով անցնելու:

— Ըստ Ձեզ՝ բարոյահոգեբանական ի՞նչ վիճակ է այսօր տիրում մեր բանակում: Ի՞նչ է անհրաժեշտ անել, որպեսզի ոչ միայն բանակը, այլև ազգն ամբողջությամբ կարողանա դուրս գալ այս նվաստացուցիչ ու ընկճված իրավիճակից և հաղթահարել մեր պատմության ներկա դառն ու դժվարին շրջափուլը: Ի՞նչ եք կարծում, մենք դա կհաջողե՞նք:

— Բանակի բարոյահոգեբանական վիճակը միշտ եղել է բարձր, և կարծում եմ, այսօր էլ այն բարձր է: Սակայն ամեն հարց չէ, որ միայն բանակի բարոյահոգեբանական վիճակից է կախված: Իսկ ինչ վերաբերում է ընկճված վիճակից դուրս գալուն, ապա դրան կարելի է հասնել միայն միահամուռ, տքնաջան, լավ աշխատանքի արդյունքում: Երբ մարդիկ, անկախ մասնագիտությունից ու կոչումից, լծվեն իրենց գործին և աշխատեն ի շահ հայրենիքի, ապա ամեն բան հնարավոր կդառնա: Հաջողությունն աշխատանքի և համախմբման ծնունդ է: Եվ հավատացած եղեք, որ Աստված ևս Իր օրհնությունը կտա մեզ, եթե մենք հավատով ու հույսով լցված ջանանք դուրս գալ բարդ իրավիճակից

Հարցազրույցը՝
Մեղրի ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Անդաստանի ծեսը

➡ էջ 4

Այսպիսով, Հայ Առաքելական Եկեղեցին Անդաստան կատարում է 15 տոների ընթացքում. բուն Անդաստանը միևնույնն է բոլոր տոների դեպքում, գործողությունների հերթականությունը չի փոխվում, փոխվում են միայն շարականներն ու սուրբգրային ընթերցվածքները: Սակայն նպատակահարմար գտանք նկարագրել Խաչվերացի երեկոյան արվող ծեսը, որն ունի որոշակի հավելումներ շարականների և ընթերցումների, ինչպես նաև թափորի շարժման ընթացքում:

Խաչվերացի տոնի երեկոյան Անդաստանի ծեսը սկսվում է եկեղեցու ատյանից: Աջ և ձախ ավանդատներից՝ դասերին համապատասխան, գալիս է թափորը: Ռեհանով և ծաղիկներով նախօրոք զարդարված սկուտեղը Ս. Խաչի երևացող նշանով բերվում և դրվում է ատյանի կենտրոնում՝ Ավագ խորանի առջև: Օրվան պատշաճ շարականի երգեցողությունից հետո ընթերցվում է «Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զզինուորութիւնս հրեշտակաց...» աղոթքը, այնուհետև կատարվում են օրվան պատշաճ ընթերցումներ: Հետո Ավետարանով աղոթասացը, Խաչվառը բռնած սարկավագը և մնացյալ թափորը մնում են բեմի առաջ, իսկ Հանդիսադիրն ու մյուս քահանաները ձեռաց խաչերով շարժվում են դեպի արևմտյան կողմը՝ երգելով. «Սուրբ Աստուած (երեք անգամ), որ խաչեցար վասն մեր...»: «Վասն Սրբազան Հայրապետին մերոյ» քարոզից հետո եպիսկոպոսն արտասանում է. «Քառասուն Տէր ողորմեա», սարկավագները ձայնում են. «Օրհնեա՛, Տէր», եպիսկոպոսն օրհնում է. «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի *Արեւելեան կողմն աշխարհիս եւ Հայրապետութիւն Հայոց* այս նշանաւ Սուրբ Խաչիւս եւ Սուրբ Աւետարանաւս, եւ աւուրս շնորհիւ, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, Ամէն»:

Դրանից հետո Հանդիսադիրն ու իր հետ եղողները շարժվում են դեպի հյուսիսային կողմը, իսկ աղոթասացը՝ դեպի հարավային: Համապատասխան շարականից և ընթերցումներից հետո ասվում է «Վասն երկրիս, անդաստանաց...» քարոզը, երկխոսությամբ՝ Եպս. «Քառասուն Տէր ողորմեա», Սրկ. «Օրհնեա՛, Տէր», Եպս. «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի *Հարաւային կողմն աշխարհիս, երկիրս, անդաստանս, այգիս եւ պտղաբերութիւն տարւոյս* այս նշանաւ Սուրբ Խաչիւս եւ Սուրբ Աւետարանաւս, եւ աւուրս շնորհիւ, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, Ամէն»:

Այնուհետև Հանդիսադիրը գնում է դեպի հարավային կողմը, իսկ աղոթասացը՝ հյուսիսային: Համապատասխան շարականից և ընթերցվածքներից հետո հնչում է «Վասն վանորէից, անապատաց եւ ամենայն եկեղեցեաց մերոց...» քարոզը, երկխոսությամբ՝ Եպս. «Քառասուն Տէր Ողորմեա», Սրկ. «Օրհնեա՛, Տէր», Եպս. «Օրհնեսցի եւ պահպանեսցի, եւ նախախնամեալ պահեսցի *Հիւսիսային կողմն աշխարհիս, վանքս, անապատս, քաղաքս եւ գիւղս եւ բնակեալ ժողովուրդս 'ի սմա*, այս նշանաւ Սուրբ Խաչիւս եւ Սուրբ Աւետարանաւս, եւ աւուրս շնորհիւ, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, Ամէն»: Ավարտին թափորը վերադառնում է իր նախկին դիրքին, այսինքն՝ Հանդիսադիրն ու իր թափորը վերադառնում են դեմքով դեպի արևելք, իսկ մյուսները՝ խորանի առջև՝ դեմքով դեպի արևմուտք, որից հետո եզրափակվում է արարողակարգի օրհնության հատվածը. «Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Այստեղ կրկին Հանդիսադիրը՝ հյուսիսից հարավ, իսկ Աղոթասացը՝ հարավից հյուսիս շարժվում են կիսաշրջանով:

Անդաստանի ավարտին թափորը վերադառնում է ատյան, զարդարված Ս. Խաչը և Ավետարանը դնում են Խորանին և երգում են «Խաչի քո Քրիստոս» շարականը, որի ընթացքում եկեղեցականները համբուրում են Ս. Խաչն ու Ավետարանը: «Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան. փրկեա յերևելի եւ յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեայ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն» Տերունական աղոթքով ավարտվում է:

Եթե Եկեղեցին ունի Ավագ (արևմտյան) դռնից բացի նաև հարավային դուռ, ապա Աղոթասացի թափորը կարող է հարավային դռնից դուրս ելնել և կանգնել Ավագ դռան դիմաց՝ դրսից: Այդ դեպքում Անդաստանը կկատարվի ոչ թե եկեղեցու մեջ, այլ եկեղեցու շուրջը:

Թեև այսօր Անդաստանը հիմնականում կատարվում է եկեղեցիների ներսում, դրանց շուրջ կամ դրանց ծառաստաններում, սակայն մինչև խորհրդային կարգերը այն կարող էր կատարվել նաև գյուղի հանդերում և այգիներում:

Անդաստանի ծեսն իրականացվում է թափոր-հանդեսի միջոցով: Այստեղ մենք գործ ունենք շքերթի պաշտամունքային գործառույթի հետ: Շքերթը ներառում է որևէ կայացած փաստի օրինականացում, համընդհանուր ճանաչում, միշտ կապված է մարդկային տվյալ խմբից անդին որևէ գաղափարի հետ, հանուն որի կատարվում է շքերթը, և որն էլ «շուք» (նախնական իմաստով՝ «ստվեր», «հովանի», ոգեղեն, վերմարդկային էություն) է հաղորդում երթին: Շքերթը quest-ի արքետիպի մարմնավորումն է, որի էություններից մեկը կյանքի գրգիռի, «դժվարհասանելի գանձի» որոնումն է: Շքերթից, նյութական աշխարհից անդին գտնվող «շուքը» հենց այդ դժվարհասանելի ու որոնվող խորհրդավոր էությունն է: Անդաստանի դեպքում այդ «շուքը» Հիսուս Քրիստոսն է, իսկ գաղափարը՝ Ավետարանի ուժով աշխարհի չորս ծագերի պահպանությունը: Շքերթի առկայությունը ենթադրում է ցանկացած երևույթի կամ գաղափարի սրբագործում, քանի որ շքերթն ինքնին սրբազան է:

Շքերթի առանցքային բովանդակությունը մեծ թվով մարդկանց, հանրության բոլոր անդամներին մեկ գաղափարի (ընդհանուր շահի) շուրջ միավորելն է, իսկ դրա շարժական-դինամիկ բնույթը ենթադրում է խորհրդանշական անցում մեկ կետից դեպի մյուսը, ուստի շքերթը հանրության տեղափոխություն է երկու նշված կետերի միջև, որի ընթացքում հանրությունը միավորվում է միևնույն գործողությունների շուրջ և հանդես է գալիս իբրև մեկ կոլեկտիվային անհատ: Թեև աշխարհականները անմիջական մասնակցություն չեն ցուցաբերում Անդաստանի ծեսին, միևնույն է, նրանք եկեղեցականների հետ ամբողջություն են կազմում, քանի որ օրհնվում են ամբողջ երկիրը և բնակչությունը: Իսկ տեղափոխության կետերն են աշխարհի չորս կողմերը՝ ամեն կողմին ուղղված համապատասխան օրհնությամբ:

Առհասարակ շքերթի ժամանակացույցը և առիթը կապված են ինչպես գործառույթի, այնպես էլ հասարակության բնույթի հետ: Այս տեսակետից շքերթները կարելի է բաժանել *պարբերական* և *դիպվածային* տեսակների: Պարբերական շքերթները կապվում են տոմարական որոշակի ժամկետներին ամրագրված տոների և ուխտերի հետ, որոնք առավել բնորոշ են ավանդական հասարակություններին: Քանի որ Անդաստանը նույնպես կատարվում է տոմարական հստակ ժամկետներին, ապա այն դասվում է պարբերական շքերթների շարքին:

Շարունակելի

Անուշավան եպիսկոպոս ԺԱՄԿՈՉՅԱՆ, պ. գ. դ.,

Կարեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պ. գ. թ.

Եկեղեցին չի կարող պարտվել....

↩ էջ 5

Եթե ուզում ես առհասարակ խափանել որևէ սահմանված նպատակ, ապա պիտի արժեզրկես այն: Ընտանիքում էլ է այդպես. եթե արժեզրկում ես տղամարդու դերն ընտանիքում, նշանակում է, որ երեխաները նույնիսկ հաշվի չեն առնի հոր խոսքը: Եթե դու արժեզրկում ես Եկեղեցուն, այնքան ես ընկղմվում անբարոյականության ճահճում, որ ընդհուպ թույլ ես տալիս որևէ էակի՝ Ամենայն Հայոց Վեհափառի վեղարը կրողին, որի վրա խաչն է, փողոցում քաշկռտել, և խստագույնս չես պատժում, նշանակում է, որ միտումնավոր ես անում այդ ամբողջը:

2019 թ. սկսեցին հեղինակազրկել բոլոր այն հայտնի անհատներին, որոնք ներկայացնում էին հայն ու Հայաստանն ամբողջ աշխարհում. ֆուտբոլի աշխարհում՝ Հենրիկ Մխիթարյան, շախմատի ոլորտում՝ Լևոն Արոնյան, և երբ Շառլ Ազնավուրն էլ մահացավ, հայտնի մարդիկ այլևս չմնացին, մնացին այնպիսիները, որոնք իրենց անուն-ազգանունով ավելի շատ զվարճանքի դաշտում են հայտնի, և չգիտեմ՝ որքանով են հայ կամ արմատներով կապված Հայաստանին, կամ արժեքաբանական առումով արդյո՞ք ինձ թույլ կտամ ընդունել, դիցուք, մարմնական բարեմասնություններով ամբողջ աշխարհին հայտնի մի աղջկա՝ կապելով հայի ու Հայաստանի հետ: Այսինքն՝ երբ դու արժեքներ չես ստեղծում և փորձում ես Հայաստանը ճանաչելի դարձնել բացառապես հենց այդ մակարդակով, նշանակում է՝ դու իրավունք չունես առհասարակ ազգ կոչվելու, որովհետև քո միտքը սառել է, դու հավելյալ արժեք ստեղծելու ոչ մի կարողականություն չունես, ինչը, կարծում եմ, ամենակորստաբերն է ցանկացած ժողովրդի համար պատմության կտրվածքով:

Ո՞րն է ելքը՝ կասեցնելու այս գործընթացը: Ելքը մեկն է: Ցանկացած քաղաքական խնդրի լուծման համար անհրաժեշտ է մտավոր կոնսենսուս: Ես՝ որպես քաղաքագետ, կարող եմ տասնյակ դասական մոդելներ ցույց տալ աշխարհում՝ ինչպե՞ս է նմանատիպ վիճակներ ժողովուրդը հաղթահարել, կամ պետական ինստիտուտները ինչպե՞ս են վարվել, բայց հաշվի առնելով «Քրիստոնյա Հայաստանի» ընթերցարանը, նաև Եկեղեցու առաջնորդությունը սրբազանի շարժմանը կամ երթին՝ կասեմ հետևյալը. պիտի լինի կոնսենսուս՝ վերջ տալու ներազգային ջլատմանը, որովհետև, կրկնեմ, սա ոչ թե իշխանության համար պայքար է, ինչպես փորձում է ներկայացնել իշխող ուժը՝ իր հոգեմտավոր մակարդակին բնորոշ դատողություններ անելով, այլ՝ հայրենիքի գոյաբանության, և որևէ մեկին հասանելի չէ՞ գուցե, որ Բագրատ սրբազանը, այսինքն՝ Հայ Եկեղեցին, իշխանության համար կռիվ տվող չէ: Հայ Եկեղեցին շա՛տ ավելի մեծ օրակարգ և առաքելություն ունի, քան իշխանություն ունենալ-չունենալն է: Ի վերջո, Հայաստանը չի կարող դառնալ կրոնապետություն, որևէ առողջ դատողություն ունեցողի մտքով անգամ չի կարող դա անցնել, որովհետև հավատքը Աստծո՛ւ և մարդո՛ւ միջև խնդիր է, և նույնիսկ Իրանում կրոնապետություն չէ: Աշխարհում կա ընդամենը մեկ կրոնապետություն՝ Վատիկանը, որը ղեկավարում է մոտ երկու միլիարդ քրիստոնյայի ամբողջ աշխարհում: Հայ Առաքելական Եկեղեցին ուրիշ առաքելություն ունի, ուրիշ խնդիր ունի իր առջև դրած և, բացի քրիստոնեության առաջին տաճարը մարմնավորած կառույցը լինելուց, ապացուցել է, որ շուրջ 1720 տարվա ընթացքում ինքը ոչ միայն դիմագծով, այլև բովանդակությամբ է ազգապահպան, գիր, գրականություն, մշակույթ, արվեստ և իր ամբողջ կարողականությունը, ռեսուրսները ծառայեցնող հայ ազգի քաղաքական նպատակների իրականացմանը: Ես սա ուզում եմ շեշտել, որովհետև Հայ Եկեղեցու մասին շատ բաներ կարող են ասել, բամբասել, չարախոսել, վատաբանել, բայց իմ ժողովրդի պատմությունն ինձ հուշել է, կամ Աստված տվել է ինձ այդ իմաստնությունը, որ ես կարողանամ հասկանալ, որ, այո՛, Հայ Եկեղեցին (եթե նկատում եք, ես պարբերաբար ասում եմ՝ Հայ Եկեղեցի, որովհետև Եկեղեցու դիմագիծն ազգային է, հայկական է) այն կառույցն է, որը համենայնդեպս վերջին մի քանի տասնամյակում շատ հաշտ և համերաշխ է այն մտքի հետ, որ հայ ժողովրդի՝ ծագումնաբանությունից ի վեր ստեղծած բոլոր արժեքները, որ մնացել են, ի վերջո քրիստոնեապես տրանսֆորմացվելու պարագայում ինքը պիտի դառնա ազգի սեփականությունը, որովհետև այս ազգը շատ ավելի հին է, քան քրիստոնեությունը:

Հայ ազգի քաղաքական իրավունքների, պահանջների նեցուկը, տեր-տիրականը, Հայկ Ասատրյանի դասակարգմամբ եմ ասում, նաև Հայ Եկեղեցին է, որովհետև իր խնդիրը միայն քրիստոնեությունը տարածելը չէ: Կան մեծ ազգեր, որոնք այդ առաքելությունն են իրականացնում. խաչակրաց արշավանքներ են արել՝ քաղաքական բացահայտ կամ թաքնված նպատակներով, և այլն, բայց Հայ Եկեղեցու խնդիրը միշտ եղել է լոկալ ազգապահպանումը: Մենք քրիստոնեությունն ընդունեցինք, որովհետև նաև հայ ժողովրդի և հայկական պետականության գոյաբանության խնդիրը քաղաքական խնդիր էր, արքունական խնդիր էր՝ պարսից արքունիների և հայ թագավորական դինաստիաների գոյության, իսկ դինաստիան արժեքներ կրողն է, տարածողն է, ժառանգողն է: Եվ ցանկացած թագավորական տոհմի արժեքաբանությունը եթե ստուգեք, այդտեղ կտեսնեք Եկեղեցու դերակատարումը ցանկացած ժողովրդի դեպքում: Այստեղ է, որ, կարծում եմ, Հայ Եկեղեցին ունի ասելիք և անելիք: Չմոռանանք կաթողիկոսներ Գևորգ Սուրենյանցին, Ներսես Աշտարակեցուն, Խրիմյան Հայրիկին, բազմաթիվ ուրիշ հոգևորականների, Երկրորդ աշխարհամարտի տարիներին Հայ Եկեղեցու դերակատարումը, որին ապավինեց ընդհուպ Կրեմլը:

Երբ որևէ շեփոր դադարում է հավաքագրել-մեկտեղել ազգի զավակներին, այդ ժամանակ հնչում են Հայ Եկեղեցու զանգերը, և այդ ղողանջն այսօր միակն է, որ միավորում է հանրային տարբեր շերտերի, կուսակցությունների, տարբեր ընկալումների մարդկանց, և այստեղ է Հայ Եկեղեցու ուժը, իսկ երբ այդ միասնականությունն ապահովող գլխավոր կառույցը՝ Եկեղեցին, դարձնում են թիրախ, նշանակում է՝ նպատակը Եկեղեցուն թիրախավորելու միջոցով համազգային պառակտվածությունը խորացնելն է և մեր ազգային հիմնախնդիրներն առաջնային օրակարգ չբերելը: Հիշեցրեք ինձ գեթ մի դեպք մեր ժողովրդի պատմության ընթացքում, երբ 600 տարի պետականությունից զրկված ենք եղել, և Հայ Եկեղեցին հնարավորություն է ունեցել պետականությունը վերականգնելու ու չի արել դա: Չկա նման բան, և այստեղ է, որ կարող ենք պնդել՝ Եկեղեցին և պետականությունը շաղկապված են իրար, և մեկն առանց մյուսի ես չեմ պատկերացնում:

— Հայաստանը հայտնվել է Արևմուտք—ՌԴ աշխարհաքաղաքական շահերի առճակատման կենտրոնում: Մյուս կողմից էլ Թուրքիան, Ադրբեջանի հետ համագործակցաբար, «մեկ պետություն, մեկ ազգ» ռազմավարությամբ, օգտվելով բարեպատեհ իրադրությունից, վերսկսել է թուրանական պետության ստեղծման հետևողական քաղաքականությունը: Հայաստանի իշխանությունը ներկա պատմաքաղաքական բարդագույն իրավիճակում անկարող է դիմագրավել պետության շուրջ օրըստօրե ահագնացող անվտանգային սպառնալիքներին: Կարճաժամկետ, անհեռատես որոշումներ են կայացվում, որոնք ավելի են խճճում իրավիճակը՝ անհուսալի դարձնելով քաղաքական՝ առանց այն էլ սուղ հնարավորությունները: Ինչպիսի՞ իշխանություն է անհրաժեշտ Հայաստանին, որ երկիրը դուրս բերվի օրհասական ընթացքից, և համազգային բեկում նշանավորվի:

— Հայաստանին ի՞նչ է անհրաժեշտ. առաջին հերթին՝ ներքին համերաշխություն, որը չպետք է ընկալել պետության արդար դատաստանից դուրս: Չի կարելի խոսել ներման մասին, ներողն Աստված է ի վերջո: Ինձ որ մնար, գուցե քրիստոնեական բարոյագիտությունը զիջի իմ անձնական մտածումներին, և ես շատ ավելի դաժանաբար գտնվեմ բոլոր նրանց հանդեպ, ովքեր իմ պետությունը հանել են աճուրդի, Արցախ են հանձնել և այսքան զոհեր պատճառել: Թող Աստված դատի, բայց պետությունը ոչ թե ահեղ դատաստան պիտի տեսնի, պետությունը պետք է արդա՛ր դատաստան վարի: Համերաշխություն չի նշանակում խուսափել արդար դատաստանից: Եվ բոլոր նրանք, ովքեր այս պետության և ժողովրդի գլխին այսպիսի պատուհաս բերեցին, իրենք պիտի ենթարկվեն պատասխանատվության՝ անխոս, աներկբա: Բայց այդ համերաշխությունը, որի գլխավոր գաղափարախոսը Եկեղեցին է և այն իրականացնելու հազարամյակների փորձ ունի, ինքն էլ կկարողանա դա անել:

Մենք չպիտի ատենք իրար, մենք կարող ենք չսիրել իրար, բայց պիտի չատենք իրար: Նվազագույնը քաղաքացիական և ազգային գործոնն այստեղ պիտի աշխատի: Այսինքն՝ ես կարող եմ չհամակրել կամ չսիրել մեկին, բայց նվազագույնը պարտավոր եմ քաղաքացիական մակարդակում օրենքի առաջ հարգել նրա իրավունքները, իսկ առավել ևս ազգային մակարդակում նվազագույնը չատել նրա՝ որպես իմ ազգակցի: Չմոռանանք այս շարժման սկզբից Բագրատ սրբազանի հայտարարությունը՝ եռագույնը պետք է հաղթի սևսպիտակին, ոգին՝ դուխին:

Մնացածն արդեն պրոֆեսիոնալ թիմերի խնդիր է. ով ինչպե՞ս իրեն կներկայացնի, ի՞նչ ծրագրեր կառաջադրի: Հայաստանն ի վերջո ունի օրենսդրություն, սահմանադրություն, որքան էլ այն տրորված լինի, որքան էլ այս գործող վարչախումբն իշխանության գալու առաջին իսկ օրվանից բոլոր օրենքները վերաձևեր «իր հագով», այնուհանդերձ պետությունը օրենքներով է առաջնորդվում, հակառակ դեպքում կլինի քաոս, բոլորը կպատերազմեն բոլորի դեմ:

Ուստի և Հայաստանին անհրաժեշտ է այնպիսի իշխանություն, որն առաջին հերթին կվերականգնի պետական ինստիտուտների լիարժեք գործունեությունը, կլինի կարգապահ, ոչ թե օրենքը կսրբադասի, որովհետև օրենքը մարդու համար է, այլ օրենքները կմշակի այնպես, որ կբխեն սեփական ժողովրդի հոգևոր, մտավոր, ֆիզիկական առկա հնարավորություններից և պոտենցիալ զարգացման ուղենշից: Այսինքն՝ օրենքներում չպետք է լինեն շինծու ձևակերպումներ, որոնք քաղաքական և սոցիալական իրականության հետ որևէ աղերս չունենան:

Հայաստանի հաջորդ իշխանությունը պիտի կարողանա երեք կարևոր խնդիր լուծել. նախ՝ երկիրը անվտանգային կոլապսի մինուս վիճակից բերի զրոյական վիճակի, երկրորդ՝ երեք կարևոր նախարարություններ պիտի հանձնվեն գերպրոֆեսիոնալների ղեկավարության. դրանք են՝

- կրթության և գիտության համակարգը. պետությունը կրթության ոլորտում է, որ պիտի ունենա իր ծրագրերը, նպատակները կյանքի կոչելու ինքնիշխան որոշում և կախված չլինի որևէ օտարերկրյա պետության դրամաշնորհներից,

- դատական համակարգը, որտեղ պիտի լինեն արդար դատաստանի համար անբասիր կենսագրությամբ մասնագետներ,

- առողջապահության համակարգը, որ մենք անտեսում ենք, բայց հետպատերազմյան վիճակը, որում է՛ Հայաստանը, բավական տխուր է: Մենք շատ վիրավորներ ունենք պատերազմի հետևանքով: Նաև առողջ սերունդ պետք է ունենանք, որ պետության անվտանգության խնդիրը լուծենք:

Ինչո՞ւ չեմ նշում անվտանգության համակարգը, որովհետև աքսիոմաների մասին չեն խոսում: Անվտանգության մակարդակի բարձրացումն աքսիոմատիկ է, ընդհանրապես քննարկման կամ ապացուցման ենթակա չէ, և ես միայն առաջնահերթություններն եմ նշում: Իսկ այս ամենը նշանակում է զարգացնել տնտեսությունը: Բոլորը միևնույն շղթայի տարբեր օղակներն են, շաղկապված են իրար: Առաջիկա իշխանությունն այս ամբողջը կկարողանա անել, եթե լինի ազգային:

Ես այս ամբողջը նշեցի, որպեսզի գլխավոր նախապայմանը հայտարարեմ: Եթե ազգային-պետական մտածողություն չունեցող, ազգային շահերը չգիտակցող իշխանություն լինի, ամբողջը զուր է: Զուր կլինի նաև Եկեղեցու տարած աշխատանքը:

Ինչո՞ւ ենք սկսել այս շարժումը, որովհետև մենք ունենք ազգային լուրջ խնդիրներ: Ազգային գլխավոր խնդիրը ոչ միայն Արցախն է, այլև հայկական գիտակրթական, հոգևոր, ֆիզիկական, կազմակերպչական, ֆինանսական բոլոր ռեսուրսների ճիշտ գույքագրումը՝ հանուն ազգային մեծ նպատակների իրականացման: Հայաստանում ցանկացած իշխանափոխություն կմնա լոկ այդ շրջանակում, իր ծիրը կմնա դա, և այդ ծիրից դուրս չի կարող գալ, եթե մենք չխոսենք ազգային գլխավոր նպատակների մասին: Բայց այդ ազգային նպատակները ճիշտ ժամանակին պիտի առաջադրվեն, որովհետև Հայաստանը հիմա՝ որպես պետություն, ֆիզիկապես ի վիճակի չէ խոսելու դրանց մասին՝ անտեսելով ներկա իրողությունները և այն թշվառ վիճակը, որում հիմա մենք ենք: Եվ որևէ գալիք իշխանություն չմտածի, որ իրեն լավ օրեր են սպասում այս իշխանության հեռացումից հետո, շատ դաժան օրեր են սպասում, և պայքարը հենց այդ ժամանակ կսկսվի: Սա դեռ նախապայքարն է, սա դեռ ոչինչ է, մեր ամենամեծ մարտահրավերը լինելու է այն ժամանակ, երբ երկրում մենք կձևավորենք ազգային իշխանություն, որի առաջ խնդիր կդրվի ոչ միայն կասեցնել կամ արգելակել հայկական պետության մայրամուտը, այլ նաև ուժ հավաքել և խոսել ազգային մեծ նպատակների իրականացման հնարավորությունների մասին:

— Հայոց Եկեղեցու և Բագրատ սրբազանի նկատմամբ ժողովուրդն առանձնահատուկ վերաբերմունք ունի: Եկեղեցու առաքելությունն այսօր, քան երբևէ, հավաքականության առաջնորդություն ստանձնելու բացառիկ զորության գործադրման մեջ է: Սրբազանը համընդհանուր հավատաբեկության տեղ բերում է հավատ, հուսալքության տեղ՝ հույս, կրավորական հոգեբանության փոխարեն՝ դիմադրողականության ոգի. նա իսկապե՛ս իր հետևից կարող է տանել հազարավորների: Շարժումն ունի համազգային դառնալու մեծ ներուժ ոչ միայն Հայոց Եկեղեցու և սրբազանի անցած ճանապարհի շնորհիվ, այլև հանրային մեծ դժգոհությունների ու գոյաբանական խնդիրների պատճառով: Ի՞նչ հանգամանքներ կարող են խոչընդոտել պայքարի նպատակի իրագործմանը, և շարժումը, ըստ Ձեզ, ի՞նչ վերջնարդյունք կունենա:

— Շարժման վերջնարդյունքը կախված է մեզնից: Մենք այս շարժման իրականացման համար դրել ենք ամեն ինչ. առաջինը՝ միտք, հավատ, կամք, մինչև վերջ գնալու վճռականություն, հետո նոր՝ հնարավորություններ: Եթե Հայ Եկեղեցին է մտնում ասպարեզ, պայքարի դաշտ, Եկեղեցին չպիտի պարտվի: Ես անձամբ կարող եմ պարտվել հարյուր անգամ, Բագրատ սրբազանը՝ որպես անձ, հազար անգամ կարող է պարտվել, Դուք՝ նույնպես, բայց Եկեղեցին չի՛ կարող պարտվել, որովհետև Եկեղեցին մեր սրբություն սրբոցն է՝ հայրենիքի հետ միասին կամ հայրենիքից հետո: Որովհետև Եկեղեցին մեր ազգային գլխավոր ինստիտուտն է, որի դրոշակը միշտ պետք է ծածանված մնա: Իսկ այդ դրոշի վրա այսօր գրված է չորս նշանաբան՝ հայ, Հայաստան, հայրենիք, Աստված: Եթե Եկեղեցին, որ մենք դիտարկում ենք ազգային համախմբման գլխավոր ինստիտուտ, պարտվեց, մենք՝ որպես ազգ, դատապարտվելու ենք համընդհանուր և գուցե վերջնական կործանման: Հետևաբար՝ մենք գնալու ենք մինչև վերջ...

— Շնորհակալություն հարցազրույցի համար...

Հարցազրուցը՝
Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
8.05.2024 թ.

Համբարձում

Համբարձման տոնը հիշատակում է աստվածամարդ Հիսուս Քրիստոսի երկինք համբարձվելը հարությունից 40 օր հետո: Համբարձման տերունական տոնն ունի 35 օրվա շարժականություն՝ կապված Սբ. Զատկի փոփոխականության հետ: Ժողովուրդն այս տոնն անվանել է նաև Վիճակի կամ Կաթնապուրի տոն՝ այն առնչելով ժողովրդական որոշ ավանդույթների հետ: Հայ Առաքելական Եկեղեցին Համբարձման տոնի օրը հիշատակում է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելը:

Պատմության պարտադրանքով 484 թվականից Հայաստանի տարբեր վայրերում հանգրվանած և Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով հաստատված Հայրապետական Աթոռը 1441 թ. Վաղարշապատի եկեղեցական ժողովի որոշմամբ մեկընդմիշտ վերահաստատվում է Ս. Էջմիածնում, ուր իջել էր Հիսուս Քրիստոս, և որտեղից դարեր շարունակ հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն շնորհվել էր փառքի լույսը: Ի հիշատակություն պատմական այդ օրվա՝ Ս. Էջմիածնում Համբարձման տոնի առթիվ մատուցվող սուրբ պատարագի ընթացքում Իջման Ս. Սեղանի առջև կատարվում է նաև Հայրապետական մաղթանք:

Հայրապետական Աթոռի՝ շուրջ հազարամյա տարագրությունից հետո վերստին իր աստվածընտիր սուրբ վայրում հաստատվելու իրողությունը Հայաստանյայց Եկեղեցին հայտարարել է ազգային տոն:

Համբարձման տոնի նշումը մեծ վաղեմություն ունի: Եվսեբիոս Կեսարացին կարծես ակնարկում է 4-րդ դարում դրա տոնակատարության մասին: Նմանապես 5-րդ դարի սկզբին Օգոստինոս Երանելին ասում է, որ այն առաքելական ծագում ունի: Տիրոջ համբարձման տոնի մասին հաճախակի հիշատակվում է Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նյուսացու և այլոց աշխատություններում: Այս պատմական տվյալները փաստում են նշյալ տոնի հույժ կարևորության մասին:

Համբարձման տոնի սուրբգրային հիմքերը և աստվածաբանական նշանակությունը: Աստվածաշնչում Համբարձման տոնի մասին առաջին պատմությունը Մարկոսի Ավետարանում է: Նկարագրությունը հակիրճ է. «Եվ Ինքը՝ Տեր Հիսուսը, աշակերտների հետ խոսելուց հետո երկինք համբարձվեց և նստեց Հոր աջ կողմում: Իսկ նրանք գնացին և ամբողջ աշխարհում քարոզում էին Ավետարանը: Տերն առաջնորդում էր նրանց և նրանց քարոզչությունը հաստատում հրաշքներով» (Մարկ. ԺԶ 19–20):

Ղուկասի Ավետարանը նույնպես սեղմ է իր նկարագրությամբ. «Ապա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա և բարձրացնելով Իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Եվ մինչ Նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից՝ դեպի երկինք վերանալով: Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ: Եվ միշտ տաճարում էին, գովաբանում և օրհնաբանում էին Աստծուն» (Ղուկ. ԻԴ 50–53):

Մատթեոսի Ավետարանն ավարտվում է Գալիլեայի մի լեռան մոտ տեղի ունեցած ժամադրության պատմությամբ, որտեղ Հիսուսը պատվիրում է աշակերտներին տարածել Ավետարանը: Եվ համբարձման մասին ոչ մի հիշատակում չի արվում:

Այսպես՝ Հիսուսի համբարձման պատմությունը հստակ և ամփոփ ներկայացնում են երկու ավետարանիչները՝ Մարկոսը և Ղուկասը, մինչդեռ Մատթեոսը չի հիշատակում այն, իսկ Հովհաննեսը միայն ակնարկում է դրա մասին՝ Հիսուսի՝ Մարիամ Մագդաղենացուն ուղղված խոսքում. «Հիսուսը նրան ասաց. «Ինձ մի՛ մոտեցիր, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել. հիմա դու գնա՛ Իմ եղբայրների մոտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ Իմ Հոր և ձեր Հոր մոտ, Իմ Աստծու և ձեր Աստծու մոտ»: Մարիամ Մագդաղենացին եկավ ու աշակերտներին պատմեց, որ ինքը տեսել է Տիրոջը, և Նա իրեն այս է ասել» (Հովհ. Ի 17–18): Հովհաննես առաքյալը, սակայն, պարզորոշ չի նկարագրում համբարձման տեսարանը:

Համբարձման ամենահայտնի դրվագը Գործքում է (Ա 9–12): Հարությունից հետո՝ քառասուն օր շարունակ, Հիսուսը քարոզեց աստվածախոս Ավետարանը: Այնուհետև Տերն առաքյալներին հավաքեց Բեթանիայում՝ Ձիթենյաց լեռան վրա, օրհնեց նրանց և համբարձվեց երկինք: Ապա հրեշտակներից հայտնվեցին երկուսը և հայտարարեցին, որ ժամանակը կանցնի, և Քրիստոսը նորից տեսանելի նշանով կվերադառնա երկիր՝ դատելու ողջերին և մահացածներին. «Գալիլեացիներ, ինչո՞ւ եք կանգնել երկնքին նայում: Այս Հիսուսը, որ ձեզանից երկինք բարձրացավ, նույն կերպ էլ պիտի գա, ինչպես որ տեսաք նրան երկինք գնալիս» (Գործք Ա 11): Պատումի վերջում աշակերտներն ուրախությամբ վերադառնում են Երուսաղեմ:

Ըստ նորկտակարանյան վերոնշյալ դրվագերի՝ մեռելներից հարություն առած Քրիստոսը բազմիցս հայտնվեց աշակերտներին՝ ամրացնելով նրանց հավատն Իր հարության հրաշքի հանդեպ և նախապատրաստելով նրանց ընդունելու խոստացված Սուրբ Հոգին:

Փրկչի հարության հետ մեկտեղ համբարձումը ևս հաստատում է Հիսուսի Աստծո Որդի և Մեսիա լինելը: Այսպես՝ Համբարձման տոնն ունի աստվածաբանական երեք կարևոր հայեցակետ.

1. Քրիստոսի համբարձմամբ նշանավորվում է մարդկության վերջնական մուտքն Աստծո երկնային արքայություն:

2. Հիսուս Քրիստոսը՝ Եկեղեցու գլուխը, մեզնից առաջ գնում է Հոր փառավոր արքայություն, որպեսզի մենք՝ Նրա մարմնի անդամներս, ապրենք Նրա հետ հավիտյան լինելու հույսով:

3. Միածին Որդին, մտնելով երկնքի սրբավայր, մշտապես բարեխոսում է մեզ համար՝ որպես միջնորդ:

Սրբագործող հարությունից 40 օր հետո Հիսուսի համբարձումը մարդու մեջ հաստատեց մի նոր սպասում՝ ահավոր և փառավորյալ Դատավորի երկրորդ գալուստը: Ահա 40 թիվը հատուկ նշանակություն ունի հուդայականության և քրիստոնեության մեջ: Հին Հրեաստանում, Մովսեսի օրենքի համաձայն, առաջնեկ տղաների ծնվելուց 40 օր հետո նրանց բերում էին տաճար՝ Աստծուն նվիրելու: Հետևելով այս օրենքին՝ Սուրբ Հովսեփը և Կույս Մարիամը Հիսուսին տաճար բերեցին Նրա ծնունդից հետո: Իսկ Զատկից 40 օր հետո Հիսուս Քրիստոսը կրկին մտնում է Իր երկնային տաճարը՝ իբրև Հորը համաերկրպագելի և համափառակից:

Քրիստոսի մարմինը, հիրավի, փառավորվեց Նրա հարության պահին: Սակայն քառասուն օրվա ընթացքում, երբ Նա ուտում և խմում էր Իր աշակերտների հետ և ուսուցանում նրանց Աստծո թագավորության մասին, Նրա փառքը մասամբ ծածկված էր մնում: Ահա համբարձման շնորհիվ Աստվածորդին ամբողջապես հայտնեց Իր աստվածային էությունը, որը լույսի պես սրբացրեց և իմաստավորեց մարդկանց հոգիները: Եվ փառավորված Քրիստոսը բազմեց Աստծո աջ կողմում, որը նշանակում է Մեսիայի թագավորության սկզբնավորումը, Մարդու Որդու վերաբերյալ Դանիել մարգարեի տեսիլքի իրականացումը. «Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, և Նրա թագավորությունը չի եղծվի» (Դանիել Ը 14): Այսու՝ առաքյալները դարձան վկաներ այդ անվախճան թագավորության, որտեղ պարփակված է Աստծո երանելի ներկայությունը:

Գարոֆալո (Բենվենուտո Տիզի). «Հիսուս Քրիստոսի համբարձումը», 1550

Համբարձման տոնի ժողովրդական սովորությունները: Համբարձման տոնն ուղեկցվում է նաև ժողովրդական մի շարք հանդիսություններով և կոչվում է Ձանգյուլում («գյուլ» նշանակում է վարդ, ծաղիկ): Հնում Համբարձման օրվա տոնակատարություններն սկսվում էին չորեքշաբթի օրը: Կանայք այդ օրը կոչում էին «Ծաղկամոր կիրակի»: Ըստ ավանդության՝ Ծաղկամայրը քրիստոնյա Վարվառե կույսն է, որը փախչելով կռապաշտ և աստվածատյաց հորից՝ ապաստանում է Աշտարակի մոտ գտնվող Արայի լեռան քարանձավում: Հայրը հետապնդում է աղջկան, գտնում է և սպանում նրան: Նահատակվելուց առաջ Վարվառեն Աստծուն խնդրում է, որ ծաղիկ և կարմրուկ հիվանդություններ ունեցող մանուկները բժշկվեն իր շնորհով և աստվածային զորությամբ: Տերը կատարում է նրա խնդրանքը, և Վարվառեի բարեխոսությունը խնդրող ծնողների զավակները բժշկվում են այդ հիվանդություններից: Այժմ այդ քարանձավը դարձել է ուխտատեղի: Քարանձավի պատերից մշտապես ջուր է հոսում, որն ունի բուժիչ հատկություն: Ժողովուրդը հավատացած է, որ այդ ջուրը Վարվառե կույսի արցունքներն են:

Նաև այսպիսի սովորություն կա. տոնի օրը ջրով լի կուժերի մեջ գցում են ծաղիկների տերևներ և աղջիկներին պատկանող զանազան պարագաներ: Այնուհետև դեռահաս մի աղջկա հագցնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները և շրջում մարդկանց տները: Այս ամենը զուգորդվում է երգերով, կատակներով և դրամահավաքով: Հետո սկսվում է վիճակահանությունը. ում պատկանում է առաջին իրը, նա ապագայում կամուսնանա: Ապա կժից հանում են մյուս իրերը, որոնց պատկանող անձանց խրատներ և բարեմաղթանքներ են տրվում:

Յուրօրինակ և անշուշտ չափազանց հետաքրքիր են տոնը նշելու կերպերը հայկական զանազան շրջաններում, սակայն յուրաքանչյուր քրիստոնյայի հոգևոր պարտքն է մի կողմ թողնել ցանկացած իրողություն եւ առաջնահերթ հասկանալ տոնի հոգևոր խորհուրդը և պատգամը. Փրկիչ Քրիստոսը մեր փոխարեն խաչվեց, այնուհետև հաղթելով մահվանը՝ հարություն առավ և 40 օր հետո համբարձվեց երկինք՝ մեզ ընծայաբերելով Իր անմահության սուրբ խինդն ու բերկրանքը:

Համբարձման տոնի հիմնական պատգամը: Տեր Հիսուս համբարձվեց ցնծությամբ և ուրախությամբ, ինչպես Դավիթ սաղմոսերգուն է ասում. «Համբարձվեց Աստված օրհնությամբ, և մեր Տերը՝ շեփորի ձայնով» (Սաղմ. ԽՁ 6): Քրիստոսի համբարձումը չէր նշանակում Աստծո և մարդու հարաբերությունների խզում, քանի որ Միածինն ասել է. «Եթե ես չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ» (Հովհ. ԺԶ 7): Այսու՝ Քրիստոսի համբարձվելը նշանավորվում է Նրա նոր ներկայությամբ, որը հավերժական և մաքրագործող է: Քրիստոս Իր համբարձմամբ մարմնով բաժանվեց մեզնից, բայց Հոգով շարունակեց մնալ մեզ հետ:

Համբարձման տոնի պատգամը սերտորեն առնչվում է հավատքի, հույսի և սիրո հետ: Հավատքի միջոցով պետք է հաղորդակից լինենք հազարամյակներ առաջ տեղի ունեցած այդ սուրբ և հրաշագործ իրադարձությանը, որը սոսկ պատմական իրողություն չէ, քանի որ ամեն տարի՝ այս գեղեցիկ տոնի օրը, Քրիստոս, ասես, վերստին խորհրդաբար համբարձվում է՝ մեր առաջ բացելով Աստծո դուռը և ընդառաջ հրավիրելով դեպի Իր երանավետ ներկայությունը:

Հաջորդ պատգամը հույսն է, ինչպես որ մի խումբ գալիլեացիներ տեսան Տիրոջ երկինք համբարձվելը և խոստումով հաստատեցին ապագայում Նրա երկրորդ գալուստը, այնպես էլ մենք՝ բոլորս պետք է մեր սրտերում և հոգիներում դրոշմենք երկրորդ գալստյան բաղձալի սպասումը և դառնանք դեպի հուսառատ կյանքը:

Վերջապես առաքինություններ ծնող սերը, որն Աստված տածեց մեր նկատմամբ և մեր մարդկային բնությամբ երկինք համբարձվեց՝ սրբացնելով հետմեղանչական մարդկային մարմինները, որոնք ապականացու էին նախաստեղծների անկման պատճառով:

Ուրեմն, սիրելիներ, եկեք խորհենք Համբարձման այս մեծագույն տոնի մասին և պատրաստվենք Սուրբ Հոգին ստանալու Հոգեգալստի օրը: Համբարձվելով Տերը յուրաքանչյուր մարդու համար բացում է հնարավորություն՝ հանգրավանելու լույսի ամենաբարձր սրբավայրում՝ հենց Բարձրյալի օթևանում: Ուստի այս տոնը փրկության հույսի տոն է, որը կերպավորվում է Աստծո կատարյալ ողորմածության մեջ: Այն քրիստոնյաների համար Սուրբ Հոգու գալստյան ավետիս է տասը օր հետո՝ Պենտեկոստեին: Իսկապես, Հիսուսն ավետում է Իր աշակերտներին Հոգու գալուստը. «Բայց ձեզ վրա Սուրբ Հոգու իջնելով զորություն կստանաք և Երուսաղեմում, Սամարիայում ու աշխարհի բոլոր ծագերում Ինձ վկաներ կլինեք» (Գործք Ա 8): Մեզ՝ հավատացյալներիս, միայն մնում է ընդունել մեծ ավետիս պարունակող այս տոնի բովանդակ խորհուրդը և շարակնաստեղծ բառերով գոչել.

«Մեր Տերը երկինք համբարձվեց՝ ասելով աշակերտներին. նստեցեք դուք Երուսաղեմ քաղաքում. մինչև հագնեք զորությունը բարձունքներից:

Միաբանված սուրբ առաքյալները՝ միախորհուրդ և միաբան. միասին նստում էին սուրբ վերնատանը և սպասում էին Սուրբ Հոգու գալստյանը:

Հանկարծակի հասավ փայլող լույսի նմանությամբ. և եկավ բնակվեց առաքյալների մեջ. երբ նստած էին սուրբ վերնատանը»:

Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ
Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Աստուածաշունչ՝ գիրք գրոց



Որովհետև Աստուած Տեր երկչոտության ոգի չտուեց, այլ՝ զորության, սիրոյ եւ զգաստության....

Բ Տիմոթեոսին 1:7

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստորագ. տպագր. 15.05.2024 թ.
Տպաքանակը՝ 1265